ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայացք հանրակրթական դպրոցի ավագ դասարանների աշակերտների, նրանց ծնողների, դասղեկների և տնօրենների կողմից

ԱՌՅԱՆՑ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2023

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագիր

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայացք հանրակրթական դպրոցի ավագ դասարանների աշակերտների, նրանց ծնողների, դասղեկների և տնօրենների կողմից

առցանց հարցման արդյունքների վերլուծություն

Հեղինակ՝ Մարինա Գալստյան

Գնահատումն իրականացվել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հետ սերտ համագործակցությամբ:

Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից և իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Սույն զեկույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով: Այստեղ ներկայացված բովանդակությունը «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ»-ի ենթադրամաշնորհառու Մարդկային զարգացման միջազգային կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2023

Բովանդակություն

Երախտագիտության խոսք 4
Հապավումների ցանկ 5
Համառոտագիր 6
Ներածություն 12
Գնահատման նպատակը և խնդիրները 13
Գնահատման մեթոդաբանությունը 14
Ընտրանքի ռազմավարություն 15
Ընտրանքի ձևավորման տեխնիկական մասը և առաձնահատկությունները 16
Գնահատման արդյունքների վերլուծություն 17
Հետազոտության մասնակիցների ընդհանուր նկարագիրը 17
Աշակերտների սոցիալ-ժողովրդագրական տվյալները 17
Ծնողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները 18
Դասղեկների սոցիալ-ժողովրդագրական տվյալները 19
Տնօրենների սոցիալ-ժողովրդագրական տվյալները 20
«Երիտասարդ» հասկացության սահմանումը և ընկալումը 20
Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության ընկալումները 22
Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին ընտանիքում և մասնակցության պրակտիկաները 31
Աշակերտների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ 31
Դասղեկների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ 33
Տնօրենների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ 33
Ծնողների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ 34
Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին ուսումնական հաստատություններում և մասնակցության պրակտիկաները դպրոցում 35
Աշակերտների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ 35
Դասղեկների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ 39
Տնօրենների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ 43
Ծնողների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ 47

Աշակերտական խորհրդատվական մարմնի դերը որոշումների կայացման գործընթացում 49
Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին համայնքում և մասնակցության պրակտիկաները 53
Աշակերտների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 53
Դասղեկների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 54
Դպրոցի տնօրենների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 56
Ծնողների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 58
Աշակերտների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին պետական քաղաքականության մեջ և մասնակցության պրակտիկաները 60
Աշակերտների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 60
Դասղեկների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 61
Դպրոցի տնօրենների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 63
Ծնողների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ 65
Աշակերտների մասնակցությանը խոչընդոտող գործոնները 67
Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ աշակերտների 67
Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ դասղեկների 68
Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ դպրոցի տնօրենների 69
Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ ծնողների 70
Եզրակացություններ 72
«Երիտասարդ» և «երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացմանը» հասկացությունների վերաբերյալ մասնակիցների ընկալումները 72
Ներքին և արտաքին ռեսուրսներ 73
Գործոնություն 73
Ներդրում 74
Նպաստող միջավայր 75
Հավելվածներ 76

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր խորին երախտագիտությունն է հայտնում Սյունիքի, Արմավիրի և Երևանի բոլոր այն բարձր դասարանների աշակերտներին, նրանց ծնողներին, դասղեկներին և տնօրեններին, ովքեր մասնակցեցին «Հայաստանում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության համապարփակ գնահատում» հետազոտության շրջանակներում կազմակերպված «Որոշումների կայացման գործընթացում հանրակրթական դպրոցի ավագ դասարանների աշակերտների ներգրավվածության գնահատում» առցանց հարցմանը:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին՝ հարցման գործընթացն արդյունավետորեն կազմակերպելու և վստահելի առաջնային տվյալներ հավաքագրելու գործում հսկայական օժանդակության համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև հետազոտական թիմի փորձագետ Մանե Թորոսյանին Երիտասարդների դրական զարգացման հայեցակարգի հիման վրա հարցման գործիքները մշակելու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությանը՝ սույն հետազոտությունն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար:

Հապավումների ցանկ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԵԴԶ	Երիտասարդների դրական զարգացում
ԵՆՈԿ	Երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՈԿԳ	Որոշումների կայացման գոծընթաց/ներ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Համառոտագիր

Գնահատման շրջանակը: Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատումն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» հնգամյա (2022-2027) ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու ընդլայնել դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Ծրագիրն իրականացնում է Փրոջեքթ Հարմոնի Հայաստանի գլխավորած կոնսորցիումը՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ-ի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի անդամակցությամբ: Ծրագրի հիմնական գործընկերն է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

«Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատումը» իրականացրել է ՄԶՄԿ-ն 2022թ. հուլիս-2023թ. մարտ ընթացքում՝ որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածությանը (ԵՆՈԿ) միտված հանրային քաղաքականության մշակման և դրան առնչվող որոշումների կայացման, ինչպես նաև «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողությունների մշակման և իրականացման համար փաստային հենք (evidence-based) ստեղծելու նպատակով:

Գնահատման տեսական հիմքը: Գնահատման շրջանակներում իրականացվել է որակական և քանակական հարցումներ: Սույն զեկույցը ներկայացնում է **քանակական հարցման** արդյունքների վերլուծության արդյունքները: Ինչպես որակական հետազոտությունը, այնպես էլ քանակական հարցումը, հիմնված է **երիտասարդների դրական զարգացման (ԵԴԶ)** մոտեցման վրա: Երիտասարդների դրական զարգացումն ընդգրկուն մոտեցում է, որի նպատակն է երիտասարդներին փոխանցել կարողություններ ու հմտություններ, որոնք նրանք կզարգացնեն իրենց ողջ կյանքի ընթացքում, ինչպես նաև ապահովել նպաստավոր միջավայր՝ երիտասարդներին հնարավորություն ընձեռելով իմաստալից կերպով ներգրավվելու հանրության սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում: ***ԵԴԶ չորս փիրույթներն են.***

- Ներքին և արտաքին ռեսուրսներ,
- Գործոնություն,
- Ներդրում,
- Նպաստող միջավայր:

Գնահատման մեթոդաբանությունը: Գնահատումն իրականացվել է քանակական առցանց հարցման մեթոդով՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ սերտ համագործակցությամբ 2022թ. նոյեմբեր-հունվար ամիսներին՝ **Արմավիրի և Սյունիքի** մարզերում և **Երևանում**՝ ընտանիքում, ուսումնական հաստատությունում, ՏԻՄ-ում և պետական մակարդակում ԵՆՈԿ վերաբերյալ 15-19 տարեկան աշակերտների, նրանց

ծնողների, դասղեկների և տնօրենների կարծիքներն առավել ներկայացուցչականորեն և մանրամասն բացահայտելու համար: Հետազոտության ընտրանքը կառուցվել է բազմաստիճան[1] (երկաստիճան) հավանականային[2] ներկայացուցչական ընտրանքային ռազմավարության հիման վրա: Քանակական առցանց հարցմանը մասնակցել են 9-12 դասարանի **1557 աշակերտ, 519 դասղեկ, 230 տնօրեն և 1566 ծնող**:

Գնահատման հիմնական բացահայտումները: Ներկայացնենք գնահատման բացահայտումները, որոնք վերաբերում են «երիտասարդ» և «երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացմանը» հասկացությունների շուրջ մասնակիցների ընկալումներին և ԵԴՀ չորս տիրույթներին՝

«Երիտասարդ» և «երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացմանը» հասկացությունների վերաբերյալ մասնակիցների ընկալումները

1. Երիտասարդների տարիքային շեմի վերաբերյալ աշակերտների ընկալումները համընկնում են «երիտասարդների» պաշտոնական սահմանման հետ (16-30 տարեկան), իսկ «մեծահասակների» ընկալմամբ երիտասարդության տարիքային միջակայքը 18-35 տարեկանն է: Դասղեկների, տնօրենների և անգամ ծնողների մեծամասնության ընկալմամբ, քանի դեռ երեխան դպրոցը չի ավարտել, նա չի կարող համարվել ինքնուրույն, որոշումների կայացմանը պատրաստ երիտասարդ:
2. Հետազոտության բոլոր թիրախային խմբերի մեծամասնության կարծիքով տարիքից բացի, «երիտասարդ» սահմանմանը համապատասխանելու համար «պետք է պատասխանատվություն կրել սեփական որոշումների հետևանքների համար» և «կարողանալ սեփական կյանքին վերաբերող ինքնուրույն որոշումներ կայացնել»:
3. Աշակերտների, ծնողների և դասղեկների գնահատմամբ որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության ամենացայտուն օրինակները վերաբերում են իրենց անմիջական շրջակա միջավայրին առնչվող խնդիրներին՝ սպորտային և ժամանցային միջոցառումների կազմակերպում, աղբահանություն, բնակարանի կահավորում և այլն, իսկ տնօրենների համար առաջին տեղում երիտասարդների մասնակցությունն է ՏԻՄ և համապետական ընտրություններին:
4. Աշակերտների, դասղեկների և տնօրենների կողմից նշված ամենահազվադեպ մասնակցության ձևը «մարզպետարաններին և համայնքապետարաններին կից երիտասարդական խորհուրդի նիստերին երիտասարդների մասնակցությունն է»:
5. Աշակերտների կարծիքով երիտասարդների ներգրավածությունը «կրթության և գիտության», «սպորտի» և «շրջակա միջավայրի պահպանության» ոլորտներում կարող է էապես բարելավել որոշումների կայացման գործընթացը:
6. Կրթության, գիտության և սպորտի ոլորտների հետ մեկտեղ, դասղեկները և տնօրենները նաև կարևորում են երիտասարդների մասնակցությունը մշակույթի, պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

[1] Բազմաստիճան ընտրանքը հավանականային ընտրանքի տեսակ է, որի ժամանակ, ընտրանքի կառուցման յուրաքանչյուր աստիճանում փոխվում է ընտրանքի միավորը:

[2] Հավանականային են այն ընտրանքները, երբ գլխավոր համախմբության յուրաքանչյուր միավոր հավասար հնարավորություն ունի ընտրանքային համախմբությունու հայտնվելու համար:

Ներքին և արտաքին ռեսուրսներ

1. Աշակերտների մեծ մասը կարծում է, որ իրենց մոտ «ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Միևնույն ժամանակ, տեղեկացվածությունը դպրոցի կառավարման գործընթացներից և աշակերտների մասնակցության հնարավոր մեխանիզմներից բավականին ցածր է:
2. Աշակերտների կեսից ավելին (58.7%)-ը նշել է, որ ունեն «լավ» կամ «գերազանց» վերլուծական կարողություններ որոշումների կայացմանը մասնակցելու համար: Նրանց վերլուծական կարողությունների մասին նմանատիպ լավ կարծիք ունեն նաև դասղեկները (58.2%) և տնօրենները (62.4%):

Գործոնություն

1. Աշակերտների կարծիքով մեր հասարակության մեջ որոշումների կայացման գործընթացում երիտասարդները բավականին պասիվ դերակատարում ունեն: Աշակերտների ընդամենը 21.2%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ: Գրեթե նույնակարծիք են նաև ծնողները (29.5%-ն է այդպես նշել):
2. Երիտասարդներին համեմատաբար ավելի մեծ դերակատարում են վերագրում դասղեկները և տնօրենները. դասղեկների 40.8%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ, իսկ տնօրենների՝ 49.8%-ը: Դասղեկների և տնօրենների այս մոտեցումը կարելի է վերագրել «սոցիալական ցանկալիության կողմնակալ ընկալման» միտմանը, երբ մեծահասակները երիտասարդներին վերագրում են այն, ինչ իրենք կցանկանային տեսնել:
3. Աշակերտների 71.6%-ի կարծիքով երիտասարդները մասնակցում են որոշումների կայացմանը նախ և առաջ գիտելիքներ, հմտություններ և սոցիալական կապեր ձեռք բերելու համար: 55.4%-ի կարծիքով նպատակն է բարելավել իրենց շրջապատող միջավայրը և համայնքը:
4. Ծնողների մեծամասնությունը՝ 90.5-ը նշել է, որ իրենց երեխան ներկայումս մասնակցում է իրենց ընտանիքում որոշումների կայացմանը: Ծնողների կարծիքով իրենց երեխաները կարող են իրական ազդեցություն ունենալ մասնագիտության ընտրությանը և ուսմանը վերաբերող հարցերում:
5. Աշակերտների կարծիքով դպրոցում իրենք կարող են համեմատաբար ավելի մեծ ազդեցություն ունենալ ուսումնական առարկայի ընտրությանը և դասղեկական ժամին վերաբերող որոշումներում:
6. Որոշումների կայացման գործընթացում իրենց աշակերտներին առավել մեծ «ակտիվություն» են վերագրում այն դասղեկները, որոնք կարևորում են 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանն ընդհանրապես: Այլ կերպ ասած այստեղ առկա է ցանկության վերագրման միտում, որը դատելով աշակերտների մասնակցության «ինքնագնահատականից», այնքան էլ այդպես չէ:

7. Դասղեկների գնահատմամբ իրենց դպրոցի աշակերտների 65.7%-ի մոտ «Ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Դասղեկները բավական բարձր են գնահատել նաև աշակերտների մոտ «ապագայի նկատմամբ հավատը» և «վերլուծական մտածողությունը»:

Ներդրում

1. Աշակերտների 88.5%-ը նշել է, որ մասնակցում է ընտանիքում որոշումների կայացմանը: Աշակերտների կարծիքով իրենք ամենաշատը ազդեցություն ունեն իրենց մասնագիտությանը և ուսմանը վերաբերող որոշումներում: Հետաքրքրական է, որ առողջության պահպանման վերաբերյալ, կենցաղային աշխատանքների կազմակերպման և ընտանիքի բնակութան վայրի վերաբերյալ որոշումների վրա ըստ աշակերտները ավելի քիչ ազդեցություն ունեն իրենք:
2. Աշակերտների 50.6%-ը «նորմալ» է գնահատում դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցությունը, իսկ 26.5%-ը՝ «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատում:
3. Հետաքրքական է, որ աշակերտները և ծնողները դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների մասնակցությունը առցանց հարթակների միջոցով քիչ արդյունավետ են համարում:
4. Աղջիկներն ավելի բարձր են գնահատել դպրոցում որոշումների կայացման մեջ իրենց մասնակցությունը (30%-ը նշել է ակտիվ, կամ շատ ակտիվ), քան տղաները (21%-ն է նշել ակտիվ, կամ շատ ակտիվ):
5. Սյունիքի և Արմավիրի մարզի աշակերտները հավասարապես (աշակերտների 29.7% յուրաքանչյուր մարզում) ավելի բարձր են գնահատել իրենց ակտիվությունը, քան Երևանի աշակերտները (23.5%):
6. Ի տարբերություն աշակերտների, որոնց 22.9%-ը որոշումների կայացմանն իրենց մասնակցությունը ցածր է գնահատել, դասղեկների ընդամենը 7.3%-ն է այդպես կարծում: Միևնույն ժամանակ, դասղեկների 44.1% աշակերտների մասնակցությունը «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատել:
7. Հետաքրքիր է, որ ի տարբերություն Սյունիքի մարզի աշակերտների, ովքեր իրենց ակտիվությունը բարձր էին գնահատել Երևանի համեմատ, Սյունիքի մարզի դասղեկները համեմատաբար ցածր գնահատական են տվել:
8. Դասղեկների և տնօրենների կարծիքով՝ իրենց դպրոցի աշակերտները կարող են առաջին հերթին իրական ազդեցություն ունենալ արտաուսումնական միջոցառումների վերաբերող և դասղեկական ժամին վերաբերող որոշումների վրա:
9. Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվության ամենաբարձր գնահատականը (աշակերտների և դասղեկների համեմատ) տվել են տնօրենները: Տնօրենների 59.5%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակերտներ ակտիվ կամ շատ ակտիվ են որոշումների կայացման գործընթացում:
10. Համայնքային և պետական մակարդակներում տնօրենների կարծիքով առավել ակտիվ են Արմավիրի մարզի աշակերտները, իսկ դպրոցում՝ Երևանի աշակերտները:

11. Ծնողները որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաների մասնակցության վերաբերյալ գրեթե նույնական պատասխան են տվել, ինչ որ երեխաները: Ծնողների միայն 27%-ն է նշել, որոշումների կայացման գործընթացում երեխաներն ակտիվ են:
12. Դասղեկների ընդամենը 14.4%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցության ակտիվությունը համայնքում որոշումների կայացմանը:
13. Ծնողների ընդամենը 4.3%-ն է նշել, համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաներն ակտիվ մասնակցում են: Միևնույն ժամանակ ծնողների 93.3%-ը նշել է, որ խրախուսում է իրենց երեխաներին մասնակցել դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը մասնակցելը:
14. Պետական մակարդակում որոշումների կայացմանը աշակերտները մասնակցել են հանրային լսումներին (աշակերտների՝ 24.2%), բողոքի ցույցերին (աշակերտների՝ 23.7%) և կուսակցությունների միջոցառումներին (19.6%) մասնակցության միջոցով:
15. Դասղեկների ընդամենը 7.1%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը: Աշակերտները հիմնականում մասնակցում են պետական մակարդակում որոշումների կայացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով:

Նպաստող միջավայր

1. Աշակերտների 50.9%-ը որոշումների կայացմանը մասնակցում է դասղեկական ժամի միջոցով: Երկրորդ տեղում մասնակցությունն է աշակերտական խորհուրդների և հարցումների միջոցով:
2. Աշակերտների գնահատմամբ՝ դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցության խթանման մեջ ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկը, ծնողները և դպրոցի ղեկավար անձնակազմը: Ինչպես տեսնում ենք, աշակերտները առավելապես մեծ դերակատարում են տվել անհատներին: Ի տարբերություն անհատների, ոչ ֆորմալ խմբերին, ինստիտուցիոնալ դերակատարներին աշակերտները ավելի քիչ կարևորություն են տվել:
3. Ի տարբերություն աշակերտների, որոնք աշակերտական խորհուրդներին շատ ավելի «համեստ» դերակատարում են տվել, դասղեկների 84.2%-ը և տնօրենների 85.2%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակետները, որոշումների կայացմանը մասնակցում են աշակերտական խորհուրդների միջոցով:
4. Հետազոտությանը մասնակցած աշակերտների 64%-ը, դասղեկների՝ 82.3%, տնօրենների՝ 92.7%-ը և ծնողների՝ 43.2%-ը կարևորել են աշակերտական խորհուրդների դերը որոշումների կայացման գործընթացում աշակերտների խթանման հարցում:
5. Դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվ մասնակցության խթանման հարցում աշակերտական խորհուրդների դերն ամենաշատը կարևորել են Արմավիրի մարզի աշակերտները (72.6%), իսկ ամենաքիչը՝ Երևանի աշակերտները (58.5%):

6. Աշակերտների միայն 33.4%-ը, դասղեկների՝ 84.2%-ը և տնօրենների՝ 85.2%-ն են նշել, որ աշակերտները որոշումների կայացմանը մասնակցում են աշակերտական խորհուրդների միջոցով:
7. Աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացմանը մասնակցության միջոց ավելի շատ մատնանշել են Սյունիքի մարզում: Բոլոր թիրախային խմբերում աշակերտական խորհուրդները որպես արդյունավետ միջոց ամենացածր նշվածությունը Երևանում է: Երևանի աշակերտների ընդամենը 23.9%-ն է նշել աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացման արդյունավետ միջոց:
8. Գյուղական բնակավայրերում բոլոր թիրախային խմբերի կարծիքով աշակերտական խորհուրդները դիտվում են ավելի արդյունավետ միջոց, քան այլ քաղաքներում և Երևանում:
9. ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի մասին տեղյակ են աշակերտների՝ ընդամենը 29.6%-ը, իսկ ամենատեղեկացվածը այս հարցում տնօրեններն են: ԿԳՄՍ-ն նախարարին կից խորհրդատվական մարմնի մասին տեղեկացված աշակերտների միայն 56.1%-ն է տեղյակ, թե ինչպես է այն ձևավորվում:
10. Ըստ աշակերտների՝ տարբեր մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդներին հիմնականում խոչընդոտում են՝ «համապատասխան ոլորտային գիտելիքի պակասը», «մոտիվացիայի բացակայությունը», «իրազեկվածության պակասը» և «փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակը»:
11. Որպես խոչընդոտող գործոն՝ «իրազեկվածության պակասի մասին» նշել են Երևանում բնակվող աշակերտների ընդամենը 25%-ը, Արմավիրում բնակվողների՝ 30.9%-ը, իսկ Սյունիքում բնակվողների՝ 33.9%-ը:
12. Բոլոր մակարդակներում երիտասարդների՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցության համար հետազոտության բոլոր մասնակիցների հիմնական մասը կարևորում է ոլորտային գիտելիքների առկայությունը, մոտիվացիայի և իրազեկվածության մակարդակը: Որպես խոչընդոտող գործոն առավել քիչ են նշվել հետևյալ հանգամանքները՝
    - Էթնիկ պատկանելիությունը.
    - Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը.
    - Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը.
    - Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը.
    - Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը.
    - Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար:

Ներածություն

Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատումն իրականացվել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը՝ խթանելու Հայաստանում երիտասարդների հանրային ներգրավվածությունը և ժողովրդավարական գործընթացները:

Ծրագիրն ունի **երկու բաղադրիչ**՝

ա) դպրոցականների քաղաքացիական մասնակցության կարողությունների բարելավում, դերի բարձրացում, սեփական գործունակության նկատմամբ վստահության խթանում.

բ) երիտասարդների համար քաղաքացիական ներգրավվածության նպաստավոր միջավայրի բարելավումը:

Այս բաղադրիչների իրականացման արդյունքում ակնկալվում է.

I. քաղաքացիական կրթության լիարժեք ներդրում հանրակրթական համակարգում.
II. ֆորմալ կրթության հագեցում արտադպրոցական գործունեությամբ և կամավորական աշխատանքներով, ինչպես նաև դրա կենսունակության համար ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում:
III. երիտասարդներին որոշումների կայացման գործընթացներում հետևողականորեն ներգրավելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացում, ինչպես նաև նման հանձնառության մակարդակի բարձրացում համապատասխան պետական կառույցներում:
IV. երիտասարդների հետ աշխատելու և նրանց քաղաքացիական մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների և հանձնառության մակարդակի բարելավում քաղաքացիական հասարակության կազմակերպություններում:
V. երիտասարդների ոչ-ֆորմալ քաղաքացիական կրթության գործուն ուղիների իրացում:

2022թ. հուլիս - 2023թ. մարտ ընթացքում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը՝ որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածությանը (ԵՆՈԿ) միտված հանրային քաղաքականության մշակման և դրան առնչվող որոշումների կայացման, ինչպես նաև «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողությունների մշակման և իրականացման համար փաստային հենք ստեղծելու նպատակով իրականացրել է որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատում:

Գնահատման նպատակը և խնդիրները

Հետազոտության **նպատակն է** գնահատել որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համար առկա մարտահրավերները և հնարավորությունները՝ ուղղված ծրագրի շրջանակներում հետևյալ խնդիրներին՝

ա) ուրվագծել պետական և տեղական իշխանությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) առկա կարողությունների և հանձնառությունների շրջանակը, որն ուղղակիորեն վերաբերում է որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածությանը.

բ) իրականացնել որոշումների կայացման մեջ երիտասրադների ներգրավվածությունն ապահովելու համար տրամադրվող աջակցության ելակետային վերլուծություն.

գ) տրամադրել ԵՆՈԿ վերաբերյալ հավաստի և վստահելի տվյալներ, հնարավորություն ընձեռելով առանձնացնել հանրային քաղաքականության այն առաջնահերթությունները, որոնք կնպաստեն որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների բովանդակալից ներգրավվածությանը.

դ) մշակել հանրային քաղաքականության առաջարկներ, որոնք թույլ կտան արդյունավետորեն բաշխել և կառավարել ռեսուրսները:

Վերոնշյալ խնդիրներին վերաբերող տեղեկատվության և տվյալների հավաքագրման նպատակով սահմանվել են հետևյալ **հետազոտական հարցերը**՝

ա) Ինչպե՞ս է հայաստանյան հանրությունն ընկալում «երիտասարդ» և «որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածություն» հասկացությունները.

բ) Որո՞նք են ԵՆՈԿ նպաստող և խոչընդոտող գործոնները և ինչպե՞ս են դրանք տարբերվում սոցիալական տարբեր խմբերում և համատեքստերում.

գ) ԵՆՈԿ ինչպիսի՞ ձևաչափեր են առկա ԵՆՈԿ հայաստանյան պրակտիկայում, և որքանո՞վ են դրանք արդյունավետ.

դ) Ո՞րն է երիտասարդների մոտիվացան՝ ներգրավվելու որոշումների կայացման գործընթացներում, և ինչպե՞ս կարելի է մոտիվացնել երիտասարդներին՝ բարելավելու նրանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում:

Վերնշյալ հարցերին պատասխանելու նպատակով ԵՆՈԿ համապարփակ գնահատման ընթացքում իրականացվել է որակական հետազոտություն: Սակայն, կարևորելով ծրագրի առաջին բաղադրիչը, որը գործողությունների բավականին լայն շրջանակ է ենթադրում, մասնավորապես, հանրակրթական դպրոցներում, որակական հետազոտության ընթացքում անհրաժեշտություն առաջացավ առավել խորությամբ ուսումնասիրելու ԵՆՈԿ ընկալումները և պրակտիկաները հանրակրթական դպրոցում:

Այդ նպատակով մշակվեց **քանակական հարցում**, որը, ԿՏԱԿ-ի հետ սերտ համագործակցությամբ, 2022թ. նոյեմբեր-հունվար ամիսներին իրականացվեց որակական գնահատման համար ընտրված նույն երկու՝ **Արմավիրի և Սյունիքի** մարզերում **և Երևանում**՝ ընտանիքում, ուսումնական հաստատությունում, ՏԻՄ-ում և պետական մակարդակում ԵՆՈԿ վերաբերյալ 15-19 տարեկան աշակերտների, նրանց ծնողների, դասղեկների և տնօրենների կարծիքներն առավել ներկայացուցչականորեն և մանրամասն բացահայտելու համար: Ինչպես որակական հետազոտությունը, այնպես էլ քանակական հարցումը, հիմնված է **երիտասարդների դրական զարգացման** մոտեցման վրա:

Երիտասարդների դրական զարգացում (ԵԴԶ)
Երիտասարդների դրական զարգացումն ընդգրկուն մոտեցում է, որի նպատակն է երիտասարդներին փոխանցել կարողություններ ու հմտություններ, որոնք նրանք կզարգացնեն իրենց ողջ կյանքի ընթացքում, ինչպես նաև ապահովել նպաստավոր միջավայր՝ երիտասարդներին հնարավորություն ընձեռելով իմաստալից կերպով ներգրավվելու հանրության սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում:

ԵԴԶ չորս փիրույթներն են.

- Ներքին և արտաքին ռեսուրսներ,
- Գործոնություն,
- Ներդրում,
- Նպաստող միջավայր:

Այս գնահատման **նպատակն է** բացահայտել հանրակրթական դպրոցում առկա որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ ընկալումները և վարքագծային դրսևորումները, մասնավորապես բացահայտել կրթական համայնքի առանցքային դերակատարների՝ աշակերտների, նրանց ծնողների, դասղեկների և տնօրենների ընկալումները և վարքագիծը տարբեր մակարդակներում՝ ընտանիք, դպրոց, համայնք և պետություն, որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ:

Գնահատման **հարցերի շրջանակը** հետևյալն է.

- Ինչպե՞ս են 15-19 տարեկան աշակերտները, նրանց ծնողները, դասղեկները և տնօրենները սահմանում «երիտասարդ» և «երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում» հասկացությունները.
- Ինչպե՞ս են հարցման մասնակից աշակերտները, ծնողները, դասղեկները և տնօրենները վերաբերվում ԵՆՈԿ-ին ընտանիքում, ուսումնական հաստատությունում, համայնքում և պետական մակարդակում՝ կախված երիտասարդի տարիքից.
- Որո՞նք են աշակերտների՝ որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունները և խոչընդոտները.
- Որոշումների կայացման մեջ աշակերտների ներգրավվածության ներկա պրակտիկայում ներգրավվածության ո՞ր ձևերն են տարածված և արդյունավետ.
- Որո՞նք են որոշումների կայացման մեջ աշակերտների ներգրավվածության շարժառիթները:

Գնահատման մեթոդաբանությունը

Գնահատման շրջանակներում կիրառվել է **առցանց հարցման մեթոդը**, որին մասնակցել են 9-12-րդ դասարանների աշակերտներ, քանի որ մասնակցությունը խթանող

ինստիտուցիոնալ մեխանիզմները հիմնականում հասանելի են այդ դասարանների աշակերտների համար: Ինչպես նաև աշակերտական խորհուրդ ձևավորում են 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների աշակերտները[3], ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի անդամ կարող են դառնալ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտները[4], 15 տարեկանները, որպես կանոն, սովորում են 9-րդ դասարանում:

Ընտրանքի ռազմավարություն

Հետազոտության ընտրանքը կառուցվել է բազմաստիճան[5] (երկաստիճան) հավանականային[6] ներկայացուցչական ընտրանքային ռազմավարության հիման վրա:
Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից՝ հետազոտության գլխավոր համախմբությունը ներառում է մի քանի թիրախային խումբ: Դրանք են՝

- Երևան քաղաքի, Արմավիրի և Սյունիքի մարզերի 9-12րդ դասարանի աշակերտները.
- նրանց ծնողները.
- դասղեկները.
- դպրոցների տնօրենները:

Յուրաքանչյուր թիրախային խմբի գլխավոր համախմբության հիմքը հանդիսացել է ԿՏԱԿ-ի համապատասխան ցուցակը:
Ընտրանքը ձևավորվել է հետևյալ տրամաբանությամբ և քայլերի հաջորդականությամբ.

1. Ընտրանքի կառուցման **առաջին աստիճանով** ձևավորվել է դասարանների ընտրանքը, պարզ հավանականային ընտրանքի ռազմավարությամբ:

Ընտրանքի ձևավորման առաջին աստիճանում ընտրանքի միավորը դասարաններն են:

Դասարանների ընդհանուր թիվը՝ N=472

Ընտրանքի սխալը՝ +-5%

Վստահության միջակայքը՝ 95

Ընտրանքի թիվը՝ (n) հաշվարկվել է պարզ հավանականային ընտրանքի բանաձևով՝

$$n = ([\![k_\alpha\hat{}2\ \sigma]\!]\ \hat{}2\ N)/(\Delta\hat{}2\ N+k_\alpha\hat{}2\ \sigma\hat{}2\ )$$

N-Գլխավոր համախմբության թիվ

k_α-Նշանակալիության գործակից

σ- Դիսպերսիա

Δ-Ընտրանքի սխալ

Այսպիսով, դասարանների ընտրանքը=380

---

[3] Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի N 571-Ն հրաման «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին, 17 մայիսի 2011 թ.-ի. https://www.arlis.am/documentview.aspx?docID=69283

[4] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգ. https://escs.am/files/files/2020-12-24/088cf9505f74721a5dca35adcc512f4c.pdf

[5] Բազմաստիճան ընտրանքը հավանականային ընտրանքի տեսակ է, որի ժամանակ, ընտրանքի կառուցման յուրաքանչյուր աստիճանում փոխվում է ընտրանքի միավորը:

[6] Հավանականային են այն ընտրանքները, երբ գլխավոր համախմբության յուրաքանչյուր միավոր հավասար հնարավորություն ունի ընտրանքային համախմբությունու հայտնվելու համար:

Այնուհետև, ԿՏԱԿ-ի դասարանների ցուցակից, պատահական թվերի գեներատորի միջոցով առանձնացվել է ընտրանքային համախմբությունը (excel rand() function):

2. Ընտրանքի ձևավորման երկրորդ փուլում, ընտրվել են դպրոցները, հիմնվելով ընտրանքում հայտնված դասարանների վրա (ընտրանքում հայտնվել են այն դպրոցները, որտեղ կան ընտրանքում հայտնված դասարաններ):
   Այնուհետև, ձևավորվել է դասղեկների, աշակերտների և ծնողների ընտրանքը՝ ընտրանքում հայտնված դպրոցներից:
   Առցանց հարցման հարցաթերթը համատարած ձևով ուղարկվել է՝
   - Ընտրանքում հայտնված բոլոր դպրոցների տնօրեններին.
   - Ընտրանքում հայտնված բոլոր դպրոցների 9-12-րդ դասարանների դասղեկներին.
   - Ընտրանքում հայտնված բոլոր դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտներին.
   - Ընտրանքում հայտնված բոլոր դպրոցների 9-12-րդ դասարանների ծնողներին:
3. Այսպիսով, ընտրանքում հայտնված դասարանների հիման վրա կառուցվել է **ընդլայնված կլաստեր** հետազոտության 4 թիրախ խմբերի ներառմամբ:

Տնօրենների ընտրանքի թիվը ուղիղ համեմատական է դպրոցում ընդգրկված դպրոցների թվին՝ (n)= 273 (առավելագույնը)
Դասղեկեր (n)= 380 (նվազագույնը)
Ծնողներ (n)= 380 (նվազագույնը) 1140 (առավելագույնը)
Աշակերտներ (n)= 380 (նվազագույնը) 1140 (առավելագույնը)

Ընտրանքի ձևավորման տեխնիկական մասը և առաձնահատկությունները

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թ. գարնանը պայմանավորված COVID-19 համաճարակով դպրոցները անցան համընդհանուր հեռավար ուսուցման և այդ ժամանակ ներդրվեց էլեկտրոնային մատյանը, որը հաջորդ ուս. տարիներին ամբողջովին փոխարինեց թղթային մատյանները, երեխայի առաջադիմությանը հետևելու միակ աղբյուրը հենց էլեկտրոնային օրագիրն է: Եվ փաստացի չլինելով պարտադիր ծնողների համար, էլեկտրոնային օրագրում գրանցված են դպրոցահասակ երեխաների ծնողների ճնշող մեծամասնությունը:
Հաշվի առնելով հետևյալ առաձնահատկությունները, ընտրանքի ձևավորման նախնական փուլում կատարվել են հետևյալ քայլերը՝

1. Երևան քաղաքի, Արմավիրի և Սյունիքի մարզերի 9-12-րդ դասարանների բոլոր աշակերտներից առանձնացվել են այն աշակերտները ում առնվազն մեկ ծնող գրանցված է էլեկտրոնային մատյաններում:
2. Հաջորդիվ հաշվի է առնվել ծնողների ակտիվությունը էլեկտրոնային օրագրում, առանձնացվել են այն երեխաները, ում ծնողները վերջին անգամ մուտք են գործել էլեկտրոնային օրագիր առնվազն մեկ ամսվա ընթացքում:
3. Հարցաթերթն ուղարկվել է համատարած տարբերակով, ընտրանքում հայտնված բոլոր դպրոցների տնօրեններին, 9-12-րդ դասարանների բոլոր դասղեկներին, աշակերտներին և ծնողներին:

Գնահատման արդյունքների վերլուծություն

Հետազոտության մասնակիցների ընդհանուր նկարագիրը

Հայաստանի երեք մարզերում ՈԿԳ-ում 15-19 տարեկան աշակերտների մասնակցության գնահատման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական տվյալները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 1 - Հետազոտության մասնակիցների բաշխումն ըստ մարզերի և բնակավայրի տիպի (%)

	Երևան	Արմավիր, գյուղ	Արմավիր, քաղաք	Սյունիք, գյուղ	Սյունիք, քաղաք	Ընդամենը
Աշակերտներ	819	269	239	95	135	1557
Դասղեկներ	257	90	47	72	53	519
Տնօրեններ	91	67	10	44	18	230
Ծնողներ	850	246	279	70	121	1566

Աշակերտների սոցիալ-ժողովրդագրական տվյալները











Ծնողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները











Դասղեկների սոցիալ-ժողովրդագրական տվյալները









Տնօրենների սոցիալ-ժողովրդագրական տվյալները





«Երիտասարդ» հասկացության սահմանումը և ընկալումը

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել երիտասարդության ստորին և վերին տարիքային շեմերի վերաբերյալ ընկալումների որոշակի տարբերություններ տարբեր թիրախային խմբերի տեսանկյունից:

Գծապատկեր 1 - Երիտասարդության ստորին վերին շեմերն՝ ըստ տարբեր թիրախային խմբերի (մեդիանա[7])



Հետաքրքիր է, որ երիտասարդների տարիքային շեմի վերաբերյալ աշակերտների ընկալումները համընկնում են «երիտասարդների» պաշտոնական սահմանման հետ[8], իսկ «մեծահասակների» ընկալմամբ երիտասարդության տարիքային միջակայքը 18-35 տարեկանն է: Մեծահասակների մոտ՝ երիտասարդների տարիքային ընկալման նման

[7] Տվյալ դեպքում մեդիանան ավելի լավ է արտահայտում տարիքի միջին արժեքը, քան թվաբանական միջինը, քանի որ տարիքային ստորին և վերին շեմերը նորմալ բաշխված չեն (բոլոր թիրախային խմբերում):

[8] Երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում.

մոտեցումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց առավել մանրամասն անդրադարձ է արվում սույն զեկույցում:
Տարիքից բացի հետազոտության թիրախային խմբերը նշել են նաև լրացուցիչ գործոններ, որոնք պետք է հաշվի առնել երիտասարդության սահմանման ընթացքում:

Գծապատկեր 2 - Տարիքից բացի, ի՞նչ այլ գործոններ պետք է հաշվի առնել «երիտասարդությունը» սահմանելիս (*պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով*)



Հետազոտության բոլոր թիրախային խմբերի մեծամասնության կարծիքով՝ տարիքից բացի երիտասարդ սահմանմանը համապատասխանելու համար «պետք է պատասխանատվություն կրել սեփական որոշումների հետևանքների համար» և «կարողանալ սեփական կյանքին վերաբերող ինքնուրույն որոշումներ կայացնել»: Ակադեմիական գրականության մեջ տարածված երիտասարդության սահմանումներում ևս կարևորվում է պատասխանատվության հանգամանքը[9]: Երիտասարդության բնորոշման առավել հաճախ նշվող պատասխաններից է նաև՝ «կրթության և աշխատանքի ոլորտում ձեռքբերումները»: Ակնհայտ է, որ սեփական կյանքին վերաբերող որոշումների կայացման ունակությունն առաջնային է «երիտասարդ» համարվելու համար:

Մեծահասակների ընկալմամբ երիտասարդների որոշումների կայացման շրջանակը շատ ավելի լայն է, քան դպրոցում սովորող աշակերտներինը: Իսկ դասղեկների, տնօրենների և անգամ ծնողների մեծամասնության ընկալմամբ, քանի դեռ երեխան դպրոցը չի ավարտել, նա չի կարող համարվել ինքնուրույն որոշումների կայացմանը պատրաստ երիտասարդ:

[9] Օրինակ՝ Arnett, J. J., Kloep, M., Hendry, L. B. and Tanner, J. L. (2011) Debating Emerging Adulthood: Stage or Process? New York: Oxford University Press. Տես՝ «Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության համապարփակ գնահատում» որակական հետազոտության «Գրականության վերլուծություն» բաժինը

Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության ընկալումները

Մասնակցության ձևերի նախընտրությունը թույլ է տալիս ոչ միայն պատկերացում կազմել հետազոտություն տարբեր թիրախային խմբերի մոտեցումների մասին, այլև որոշումների կայացման ընթացքում երիտասարդների դերի և կարևորության մասին: Հետազոտության արդյունքների վերլուծության միջոցով մենք կարող ենք տեսնել նաև, թե որ համատեքստում են հետազոտության մասնակիցները տեսնում երիտասարդների մասնակցությունը (ընտանիքում, համայնքում, մարզային կամ պետական մակարդակներում):

Հետազոտության տարբեր թիրախային խմբեր նաև նշել են, թե որոնք կարող են համարվել որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության օրինակներ: Աշակերտների կարծիքով որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության առավել ցայտուն օրինակներ են՝ «համայնքում աղբահավաքի կազմակերպումը», «դպրոցում սպորտային և ժամանցային խաղերի կազմակերպումը» և «բնակարանի կահավորման նախագծումը և կազմակերպումը» և այլն:

Գծապատկեր 3 - Որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության օրինակներ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (*պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով*)

Դասղեկների կողմից նշված տարբերակների առաջին քառյակում որոշումների կայացմանը վերաբերող նույն պատասխանները, որոնք նշել են աշակերտները, մեկ տարբերությամբ, որ դասղեկներն ավելի հաճախ են նշել «ՏԻՄ և համապետական ընտրություններում երիտասարդների մասնակցությունը», քան աշակերտները:

Գծապատկեր 4 - Որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության օրինակներ, ԴԱՍՂԵԿՆԵՐ (*պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով*)



Տնօրենների կողմից ամենահաճախ նշված պատասխանը «Երիտասարդի մասնակցությունն է ՏԻՄ և համապետական ընտրություններին»: Ընդ որում ամենահազվադեպ նշված մասնակցության ձևը վերոհիշյալ երեք խմբերի (աշակերտներ, դասղեկներ և տնօրեններ) կողմից «մարզպետարաններին և համայնքապետարաններին կից երիտասարդական խորհրդի նիստերին երիտասարդների մասնակցությունն է»:

Գծապատկեր 5 - Որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության օրինակներ, ՏՆՕՐԵՆՆԵՐ (*պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով*)



Հետաքրքիր է, որ ծնողների համար երիտասարդի մասնակցությունը բնակարանի կահավորման նախագծմանն ավելի առաջնային տեղ է զբաղեցնում, քան մյուս թիրախային խմբերի դեպքում է:

Գծապատկեր 6 - Որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության օրինակներ, ԾՆՈՂՆԵՐ *(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)*



Տարիների ընթացքում հասարակության մոտ ձևավորվել և շարունակում են ձևավորվել պատկերացումներ տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության վերաբերյալ: Հետազոտության մասնակիցների մի մասի ընկալմամբ երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը հանգում է նեղ ընտանեկան հարցերի քննարկմանը և իրականացմանը, մյուս մասը գտնում է, որ երիտասարդները պետք է մասնակցեն դպրոցի և համայնքի հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, իսկ մի մասը գտնում է որ երիտասարդները պետք է նաև ակտիվորեն մասնակցեն մարզային և համապետական մակարդակներում որոշումների կայացմանը: Առաջին հայացքից «որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության ձևերի մասին» տարբեր խմբերի պատկերացումները համընկնում են և նշանակալի տարբերություններ չենք տեսնում: Սակայն պատասխանների **գործոնային վերլուծությունը**[10] թույլ է տվել առանձնացնել երիտասարդների մասնակցության վերաբերյալ ընկալումների հետաքրքիր ձևեր, որոնք ներկայացված են ստորև.

1. **Մակրո մակարդակ կամ երիտասարդները որպես քաղաքական և սոցիալական ակտիվիստներ**. Այս գործոնը վերաբերում է հետազոտության այն մասնակիցներին (աշակերտներ, դասղեկներ, տնօրեններ և ծնողներ), ովքեր որոշումների կայացմանը մասնակցությունը դիտարկում են ընտրություններին մասնակցության, բողոքի ցույցին մասնակցության, համայնքապետարանի աշխատակիցների հետ ջրամատակարարման խնդիրների քննարկման տեսանկյունից, ինչպես նաև մարզպետարանին կամ համայնքապետարանին կից երիտասարդական խորհրդի նիստերին մասնակցության տեսանկյունից:
2. **Մեզո մակարդակ կամ երիտասարդները որպես իրենց սոցիալական միջավայրում առկա խնդիրների լուծման ակտիվ մասնակիցներ**. Այս գործոնը վերաբերում է հետազոտության այն մասնակիցներին, ովքեր մասնակցությունը

[10] Principal component analysis (PCA)

դիտարկում են համայնքում, դպրոցում և տանը առկա խնդիրների լուծմանը ներգրավման տեսանկյունից:

3. **Միկրո մակարդակ կամ երիտասարդների «պասիվ» մասնակցության կողմնակիցներ.** Այս գործոնը վերաբերում է հետազոտության այն մասնակիցներին, ովքեր կարծում են, որ որոշումների կայացման գործընթացում երիտարդների մասնակցությունը ենթադրում է սոցիալական միջավայրում և սոցիալական մեդիայում կարծիք հայտնելու ունակություն և պատրաստակամություն:

Հետազոտությանը մասնակցած աշակերտների կարծիքով մեր հասարակության մեջ որոշումների կայացման գործընթացում երիտասարդները բավականին պասիվ դերակատարում ունեն: Մասնավորապես, աշակերտների ընդամենը 21.2%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ (**Գծապատկեր 7**): Ընդ որում անկախ բնակության վայրից և սեռից, աշակերտները գրեթե նույն կերպ են պատասխանել այս հարցին: Աշակերտների հետ համակարծիք են նաև իրենց ծնողները: Ծնողների ընդամենը, 29.5%-ն է նշել, որ երիտասարդները մեծահասակների հետ համատեղ որոշումներ են ընդունում:

Գծապատկեր 7 - Հայաստանյան մշակույթում որքանո՞վ է երիտասարդների դերը հաշվի առնվում տարբեր մակարդակներում որոշումներ կայացնելիս, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Երիտասարդներին համեմատաբար ավելի մեծ դերակատարում են վերագրում դասղեկները և տնօրենները: Մասնավորապես, դասղեկների 40.8%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ (**Գծապատկեր 8**), իսկ տնօրենների՝ 49.8%-ը (**Գծապատկեր 9**): Դասղեկների և տնօրենների այս մոտեցումը կարելի է վերագրել «սոցիալական ցանկալիության կողմնակալ ընկալման[11]» միտմանը, երբ մեծահասակները երիտասարդներին վերագրում են այն, ինչ իրենք կցանկանային տեսնել՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նրանք 2021թ. ընդունված Հանրակրթության պետական

[11] Social desirability bias

չափորոշչի իրականացնողն են, որը շեշտադրում է սովորողակենտրոն մոտեցումը և շրջանավարտի ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը[12]:

Գծապատկեր 8 - Հայաստանյան մշակույթում որքանո՞վ է երիտասարդների դերը հաշվի առնվում տարբեր մակարդակներում որոշումներ կայացնելիս, ԴԱՍՂԵԿՆԵՐ (%)



Ակնհայտ է, որ աշակերտները շատ ավելի փոքր դերակատարում են վերագրում իրենց, քան դասղեկները և տնօրենները, ովքեր գտնում են, որ երիտասարդները նույնպես կարող են հանդես գալ նախաձեռնողի դերում: Ընդ որում՝ ի տարբերություն դասղեկների՝ տնօրենների համեմատաբար ավելի մեծ մասն է երիտասարդներին նախաձեռնողի դեր վերագրում:

[12] Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ. Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի n 136-ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Գծապատկեր 9 - Հայաստանյան մշակույթում որքանո՞վ է երիտասարդների դերը հաշվի առնվում տարբեր մակարդակներում որոշումներ կայացնելիս, ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Ծնողների 29.5%-ի կարծիքով՝ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ: Այսպիսով, ծնողները նույնպես նախաձեռնողականություն են վերագրում երիտասարդներին, սակայն «դասղեկների» և «տնօրենների» համեմատ «զգուշավոր» դիրք են զբաղեցնում (այսինքն, դասղեկների համեմատ՝ ծնողների շատ ավելի փոքր մասն է այդ կարծիքն արտահայտել):

Գծապատկեր 10 - Հայաստանյան մշակույթում որքանո՞վ է երիտասարդների դերը հաշվի առնվում տարբեր մակարդակներում որոշումներ կայացնելիս, ԾՆՈՂՆԵՐ (%)



Այս հարցի դիտարկումը բնակավայրի տեսակի համատեքստից հետաքրքիր պատկեր ենք ստանում: Մասնավորապես, դիտարկելով առաջին երկու առավել հաճախ հանդիպող պատասխանները, որոնք վերաբերում են մեծահասակների (կամ երիտասարդների) հետ համատեղ որոշումների կայացմանը, ստանում ենք հետևյալ պատկերը. երիտասարդներին ամենաքիչ նախաձեռնողականությունը վերագրում են մայրաքաղաքի երիտասարդները (40.1%-ը), իսկ ամենամեծ նախաձեռնողականությունը և որոշումներին կայացման մասնակցությունը վերագրում են գյուղաբնակ երիտասարդները (47.2%-ը):

Հետազոտության մասնակիցները անդրադարձել են նաև այն ոլորտներին, որտեղ երիտասարդների մասնակցությունը էապես կարող է բարելավել որոշումների կայացումը: Հետազոտությանը մասնակցած աշակերտների ընդամենը 1.9%-ն է նշել, որ «ոչ մի» ոլորտում երիտասարդների մասնակցությունը չի բարելավի որոշումների կայացմանը: Իսկ մյուս 98.1%-ի կարծիքն ըստ ոլորտների ներկայացված է ստորև (**Գծապատկեր 11**).

Գծապատկեր 11 - Ո՞ր ոլորտներում երիտասարդների մասնակցությունը էապես կբարելավի որոշումները: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Աշակերտների կարծիքով՝ երիտասարդների ներգրավածությունը «կրթության և գիտության», «սպորտի» և «շրջակա միջավայրի պահպանության» ոլորտներում կարող է էապես բարելավել որոշումների կայացման գործընթացը: Հատկանշական է, որ այս պատասխանների գերակայությունը սերտորեն փոխկապված է աշակերտների ամենօրյա գործունեության հետ՝ կրթության, սպորտային միջոցառումների կազմակերպման և մասնակցության, շրջակա միջավայրի բարեփոխման (աղբահանություն, ծառատունկ և այլն):

«Կրթության և գիտության», «սպորտի» ոլորտների հետ մեկտեղ, դասղեկները նաև կարևորում են երիտասարդների մասնակցությունը «մշակույթի», «պաշտպանության և անվտանգության» ոլորտներում (**Գծապատկեր 12**):

Գծապատկեր 12 - Ո՞ր ոլորտներում երիտասարդների մասնակցությունը էապես կբարելավի որոշումները: ԴԱՍՂԵԿՆԵՐ (%)



Հետազոտությանը մասնակցած տնօրենները նշել են նույն ոլորտները, ինչ աշակերտները և դասղեկները: Հետաքրքիր է սակայն, որ տնօրենների կարծիքով առաջին տեղում սպորտի ոլորտն է:

Գծապատկեր 13 - Ո՞ր ոլորտներում երիտասարդների մասնակցությունը էապես կբարելավի որոշումները: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Ծնողների կարծիքով «կրթության և գիտության» ոլորտում երիտասարդներն ամենամեծ դերակատարումը կարող են ունենալ որոշումների կայացման բարելավման հարցում: Մյուս բոլոր ոլորտներում մասնակցությունը զգալիորեն զիջում է «կրթության և գիտության» ոլորտին:

Հետաքրքրական է դիտարկել, որ արտաքին քաղաքականության, արտակարգ իրավիճակների կառավարման, արդարադատության և առողջապահության ոլորտները հետազոտության մասնակից աշակերտները, ծնողները, դասղեկները և տնօրենները

ամենաքիչն են նշել որպես ոլորտներ, որոնցում երիտասարդների մասնակցությունը էապես կբարելավի որոշումները:

Աշակերտների 71.6%-ի կարծիքով երիտասարդները մասնակցում են որոշումների կայացմանը նախ և առաջ գիտելիքներ, հմտություններ և սոցիալական կապեր ձեռք բերելու համար (**Գծապատկեր 14**):

Գծապատկեր 14 - Ինչո՞ւ են Հայաստանում երիտասարդները մասնակցում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Հաշվետվության այս բաժնում մենք կարողացանք պատկերացում կազմել, թե ինչպես են հետազոտության մասնակիցները ընկալում երիտասարդներին, ինչ դերակատարում են նրանց վերագրում և որ ոլորտներում որոշումների կայացմանն են առավել նպատակահարմար համարում նրանց մասնակցությունը: Հաջորդ բաժիններում մանրամասն անդրադարձ է արվում ընտանիքում, դպրոցում և համայնքում երիտասարդների մասնակցության պրակտիկաներին, ինչպես նաև վերաբերմունքին:

Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին ընտանիքում և մասնակցության պրակտիկաները

ՈԿԳ-ում երիտասարդների մասնակցության և երիտասարդների ինքնադրսևորման տարբեր մակարդակներ գոյություն ունեն: Երիտասարդների համար մասնակցության առաջին հնարավորությունը ստեղծվում է ընտանիքում, որը հանդիսանում է սոցիալիզացիայի առաջնային օղակը, որտեղ նրանք նախ և առաջ հնարավորություն են ստանում մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը, այնուհետև մասնակցել և իրենց կարծիքը հայտնել, ընտանիքին, կենցաղին վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ: Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս են գնահատել հետազոտության մասնակիցները երիտասարդների մասնակցությունը ընտանիքում որոշումների կայացման գործընթացում:

Աշակերտների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ

Ինչպես տեսնում ենք գծապատկերից (**Գծապատկեր 15**), տարիքի աճին զուգընթաց՝ աշակերտների կարծիքով՝ աճում է նաև որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը:

Գծապատկեր 15 - Ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Տվյալ հարցի և աշակերտների բնակության վայրի, կամ մյուս ժողովրդագրական տվյալների միջև որևէ նշանակալի փոխկապվածություն չկա: Միակ հետաքրքիր հանգամանքն այն է, որ հետազոտությանը մասնակցած աղջիկների 76.3%-ը կարևոր է համարում 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, մինչդեռ, տղաների միայն 63.4%-ն է այդպես կարծում: Այլ կերպ ասած, աղջիկներն ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը վաղ տարիքից ավելի բարձր են գնահատում, քան տղաները:

Միևնույն ժամանակ աշակերտների 88.5%-ը նշել է, որ մասնակցում է ընտանիքում որոշումների կայացմանը: Աշակերտների կարծիքով՝ իրենք ամենաշատ ազդեցությունն ունեն իրենց մասնագիտությանը և ուսմանը վերաբերող որոշումներում: Հետաքրքրական է, որ ըստ աշակերտների՝ իրենք ավելի քիչ ազդեցություն ունեն առողջության պահպանման, կենցաղային աշխատանքների կազմակերպման և ընտանիքի բնակության վայրի վերաբերյալ որոշումների վրա:

Գծապատկեր 16 - Ընտանիքում ո՞ր որոշումների վրա Դուք կարող եք իրական ազդեցություն ունենալ: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)*



Դասղեկների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ

Դասղեկների 55.7%-ը խիստ կարևոր է համարում 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը ընտանիքում որոշումների կայացմանը և ընդամենը 11.2%-ն է կարծում, որ 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունը ընտանիքում որոշումների կայացմանը խիստ կարևոր է: Հետազոտությանը մասնակցած մյուս բոլոր խմբերի հետ համեմատած դասղեկներն ամենացածր կարևորության գնահատականն են տվել 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությանը ընտանիքում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 17**):

Գծապատկեր 17 - Ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԴԱՍՂԵԿՆԵՐ (%)



Տնօրենների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ

Ինչպես և հետազոտությանը մասնակցած մյուս խմբերի դեպքում տնօրենները նույնպես գտնում են, որ ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունն աճում է տարիքի աճին զուգընթաց: Այսպես, տնօրենների 75.1%-ը գտնում է, որ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը ընտանիքում որոշումների կայացմանը խիստ կարևոր է, մինչդեռ 15-19 տարեկանների մասնակցությունը, տնօրենների միայն 15.1%-ն է խիստ կարևոր համարում:

Գծապատկեր 18 - Ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Ծնողների գնահատականը ընտանիքում որոշումների կայացման վերաբերյալ

Հետազոտությանը մասնակցած ծնողների կարծիքը համընկնում է աշակերտների կարծիքի հետ: Ծնողների 61.6%-ը խիստ կարևոր է համարում ընտանիքում որոշումների կայացման մեջ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը, իսկ 15-19 տարեկան երիտասարդների հետ կապված՝ դասղեկների 17.3%-ն է այդպես կարծում:

Գծապատկեր 19 - Ընտանիքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԾՆՈՂՆԵՐ *(%)*



Միևնույն ժամանակ ծնողների մեծամասնությունը՝ 90.5-ը նշել է, որ իրենց երեխան ներկայումս մասնակցում է իրենց ընտանիքում որոշումների կայացմանը: Ծնողների կարծիքով՝ իրենց երեխաները կարող են իրական ազդեցություն ունենալ նախ և առաջ մասնագիտության ընտրությանը և ուսմանը վերաբերող հարցերում (**Գծապատկեր 20**): Հատկանշական է, որ ծնողների գնահատականը համընկնում է աշակերտների՝ ընտանիքում ՈԿԳ-ում իրենց ներգրավվածության գնահատականին:

Գծապատկեր 20 - Ընտանիքում ո՞ր որոշումների վրա կարող է իրական ազդեցություն ունենալ Ձեր երեխան: ԾՆՈՂՆԵՐ *(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)*



Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին ուսումնական հաստատություններում և մասնակցության պրակտիկաները դպրոցում

Աշակերտների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Աշակերտների 79.8%-ի կարծիքով 20-24 տարեկան երիտասարդների մասնակցությունը ուսումնական հաստատությունում որոշումների կայացմանը կարևոր է: Սա այն տարիքային խումբն է, որի դեպքում աշակերտներն ամենաշատն են կարևորել ուսումնական հաստատությունում ՈԿԳ-ում երիտասարդների մասնակցությունը:

Գծապատկեր 21 - Ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Աշակերտների 50.6%-ը «նորմալ» է գնահատում դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցությունը, իսկ 26.5%-ը՝ «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատում (**Գծապատկեր 22**):

Գծապատկեր 22 - Գնահատեք Ձեր մասնակցությունը դպրոցում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Հետաքրքիր է, որ աղջիկներն ավելի բարձր են գնահատել դպրոցում որոշումների կայացման մեջ իրենց մասնակցությունը (30%-ը նշել է ակտիվ, կամ շատ ակտիվ), քան տղաները (21%-ն է նշել ակտիվ, կամ շատ ակտիվ): Սյունիքի և Արմավիրի մարզի աշակերտները հավասարապես (աշակերտների 29.7% յուրաքանչյուր մարզում) ավելի բարձր են գնահատել իրենց ակտիվությունը, քան Երևանի աշակերտները (23.5%) (**Գծապատկեր 24**):

Գծապատկեր 23 - Գնահատեք Ձեր մասնակցությունը դպրոցում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Աշակերտների 50.9%-ը որոշումների կայացմանը մասնակցում է դասղեկական ժամի միջոցով: Երկրորդ տեղում մասնակցությունն է աշակերտական խորհուրդների և հարցումների միջոցով:

Գծապատկեր 24 - Ինչպե՞ս եք Դուք մասնակցում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Աշակերտների կարծիքով՝ իրենք կարող են համեմատաբար ավելի մեծ ազդեցություն ունենալ ուսումնական առարկայի ընտրությանը և դասղեկական ժամին վերաբերող որոշումներում (**Գծապատկեր 25**):

Գծապատկեր 25 - Ո՞ր որոշումների վրա կարող եք իրական ազդեցություն ունենալ: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)*



Աշակերտները նաև գնահատել են այն կարողությունների առկայությունը, որոնք նպաստում են որոշումների կայացմանն իրենց մասնակցությանը: Հետազոտությանը մասնակցած աշակերտների 72.8%-ը նշել է, որ աշակերտների մոտ «Ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Միևնույն ժամանակ, տեղեկացվածությունը դպրոցի կառավարման գործընթացներից և աշակերտների մասնակցության հնարավոր մեխանիզմներից բավականին ցածր է (**Գծապատկեր 26**):

Գծապատկեր 26 - Խնդրում ենք գնահատել աշակերտների՝ դպրոցում որոշումների կայացմանը մասնակցելու համար անհրաժեշտ կարողունակությունները՝ գիտելիքը, հմտությունները և արժեքային դիրքորոշումները: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Աշակերտների գնահատմամբ՝ դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցության խթանման մեջ ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկը, ծնողները և դպրոցի ղեկավար անձնակազմը: Աշակերտների կեսից ավելին (58.7%)-ը նշել է, որ ունեն «լավ» կամ «գերազանց» վերլուծական կարողություններ որոշումների կայացմանը մասնակցելու համար: **Գծապատկեր 27**-ից տեսնում ենք, որ դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվ մասնակցության խթանման գործում ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկները: Եթե աշակերտների 47.5%-ը նշել է, որ դասղեկը կարևոր դեր ունի վերոհիշյալ հարցում, ապա աշակերտական խորհուրդի» դերը «խիստ կարևորում են» ընդամենը 17.7%-ը:

Գծապատկեր 27 - Խնդրում ենք գնահատել հետևյալ դերակատարների դերն ու կարևորությունը՝ դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների ակտիվ մասնակցությունը խթանելու գործում: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Դասղեկների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Դասղեկների դիտարկմամբ ուսումնական հաստատությունում, որոշումների կայացման գործընթացում 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը ավելի մեծ կարևորություն ունի, քանի 15-19 տարեկանների մասնակցությունն իրենց ուսումնական հաստատություններում (**Գծապատկեր 28**):

Գծապատկեր 28 - Ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Ի տարբերություն աշակերտների, որոնց 22.9%-ը որոշումների կայացմանն իրենց մասնակցությունը ցածր է գնահատել, դասղեկների ընդամենը 7.3%-ն է այդպես կարծում: Միևնույն ժամանակ, դասղեկների 44.1% աշակերտների մասնակցությունը «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատել:

Գծապատկեր 29 - Դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության աստիճանն ըստ 15-19 տարեկանների մասնակցության կարևորության: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Հատկանշական է, որ որոշումների կայացման գործընթացներում իրենց աշակերտներին առավել մեծ «ակտիվություն» են վերագրում այն դասղեկները, որոնք կարևորում են 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանն ընդհանրապես: Այլ կերպ ասած այստեղ առկա է ցանկության վերագրման միտում, որը դատելով աշակերտների մասնակցության «ինքնագնահատականից», այնքան էլ այդպես չէ:

Գծապատկեր 30 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության ակտիվությունը: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Հետաքրքիր է, որ ի տարբերություն Սյունիքի մարզի աշակերտների, ովքեր իրենց ակտիվությունը բարձր էին գնահատել Երևանի համեմատ, Սյունիքի մարզի դասղեկները համեմատաբար ցածր գնահատական են տվել (32%-ն է բարձր գնահատել ակտիվությունը), իսկ ամենաբարձր գնահատականը տվել են Արմավիրի մարզի դասղեկները (53.3%-ն է բարձր գնահատել ակտիվությունը):

Գծապատկեր 31 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության ակտիվությունը, ըստ մարզերի: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Հատկանշական է, որ ի տարբերություն աշակերտների, որոնք աշակերտական խորհուրդներին շատ ավելի «համեստ» դերակատարում են տվել, դասղեկների 84.2%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակետները, որոշումների կայացմանը մասնակցում են աշակերտական խորհուրդների միջոցով (**Գծապատկեր 32**):

Գծապատկեր 32 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցում աշակերտներն առավել արդյունավետորեն մասնակցում որոշումների կայացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դասղեկների կարծիքով՝ իրենց դպրոցի աշակերտները կարող են առաջին հերթին իրական ազդեցություն ունենալ արտաուսումնական միջոցառումների վերաբերող և դասղեկական ժամին վերաբերող որոշումների վրա:

Գծապատկեր 33 - Ո՞ր որոշումների վրա կարող են Ձեր դպրոցի աշակերտները իրական ազդեցություն ունենալ: ԴԱՍՂԵԿՆԵՐ ***(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)***



Դասղեկների գնահատմամբ՝ իրենց դպրոցի աշակերտների 65.7%-ի մոտ «ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Դասղեկները բավական բարձր են գնահատել նաև աշակերտների մոտ «ապագայի նկատմամբ հավատը» և «վերլուծական մտածողությունը» (**Գծապատկեր 34**):

Գծապատկեր 34 - Խնդրում ենք գնահատել աշակերտների՝ դպրոցում որոշումների կայացմանը մասնակցելու համար անհրաժեշտ կարողունակությունները՝ գիտելիքը, հմտությունները և արժեքային դիրքորոշումները: ԴԱՍՂԵԿՆԵՐ ***(%)***



Դասղեկների գնահատմամբ՝ դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության խթանման մեջ ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկը, դպրոցի ղեկավար անձնակազմը և դասավանդող ուսուցիչները:

Գծապատկեր 35 - Խնդրում ենք գնահատել հետևյալ դերակատարների դերն ու կարևորությունը՝ դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների ակտիվ մասնակցությունը խթանելու գործում: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Տնօրենների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Տնօրենների կարծիքով՝ ուսումնական հաստատությունում ՈԿԳ-ում 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը ավելի մեծ կարևորություն ունի, քանի 15-19 տարեկանների մասնակցությունն իրենց ուսումնական հաստատություններում (**Գծապատկեր 36**):

Գծապատկեր 36 - Ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվության ամենաբարձր գնահատականը (աշակերտների և դասղեկների համեմատ) տվել են տնօրենները: Տնօրենների

59.5%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակերտներ ակտիվ կամ շատ ակտիվ են որոշումների կայացման գործընթացում:

Գծապատկեր 37 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության ակտիվությունը: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Բոլոր թիրախային մարզերում տնօրենների կարծիքով աշակերտները առավել ակտիվ ներգրավված են դպրոցին վերաբերող որոշումների կայացման գործընթացում, այնուհետև համայնքի և շատ ավելի քիչ մասով պետական կարևորության որոշումներում:

Գծապատկեր 38 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության ակտիվությունը: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Գծապատկեր 38 - ից տեսնում ենք, որ համայնքային և պետական մակարդակներում տնօրենների կարծիքով առավել ակտիվ են Արմավիրի մարզի աշակերտները, իսկ դպրոցում՝ Երևանի աշակերտները:

Տնօրենների 85.2%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակետները որոշումների կայացմանը մասնակցում են աշակերտական խորհուրդների միջոցով (**Գծապատկեր 39**):

Գծապատկեր 39 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցում աշակերտներն առավել արդյունավետորեն մասնակցում որոշումների կայացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Ինչպես և դասղեկների դեպքում, տնօրենների կարծիքով իրենց դպրոցի աշակերտները կարող են առաջին հերթին իրական ազդեցություն ունենալ արտաուսումնական միջոցառումներին և դասղեկական ժամին վերաբերող որոշումների վրա:

Գծապատկեր 40 - Ո՞ր որոշումների վրա կարող են Ձեր դպրոցի աշակերտները իրական ազդեցություն ունենալ: ՏՆՕՐԵՆՆԵՐ*(պատասխանները ներկայացված են բազմակի ընտրությամբ հարցի վերլուծության տրամաբանությամբ, %-ով)*



Տնօրենների գնահատմամբ՝ իրենց դպրոցի աշակերտների 68.3%-ի մոտ «ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Տնօրենները բավական բարձր են գնահատել նաև աշակերտների մոտ

«ապագայի նկատմամբ հավատը» և «միջանձնային հաղորդակցության հմտությունները» (**Գծապատկեր 41**):

Գծապատկեր 41 - Խնդրում ենք գնահատել աշակերտների՝ դպրոցում որոշումների կայացմանը մասնակցելու համար անհրաժեշտ կարողունակությունները՝ գիտելիքը, հմտությունները և արժեքային դիրքորոշումները: ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Տնօրենների գնահատմամբ՝ դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության խթանման մեջ ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկը, դպրոցի ղեկավար անձնակազմը և աշակերտական խորհուրդը:

Գծապատկեր 42 - Խնդրում ենք գնահատել հետևյալ դերակատարների դերն ու կարևորությունը՝ դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների ակտիվ մասնակցությունը խթանելու գործում: ՏՆՕՐԵՆՆԵՐ*(%)*



Ծնողների գնահատականը ուսումնական հաստատություններում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Ծնողների մեծամասնության կարծիքով՝ ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցությունը «կարևոր» կամ «խիստ կարևոր» է: Այստեղ նույնպես, ինչպես և հետազոտության մյուս թիրախային խմբերի մոտ, տարիքային խմբերի աճին զուգընթաց, մասնակցության կարևորությունն աճում է (**Գծապատկեր 43**):

Գծապատկեր 43 – Ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԾՆՈՂՆԵՐ (%)



Ծնողները որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաների մասնակցության վերաբերյալ գրեթե նույնական պատասխան են տվել, ինչ որ երեխաները: Ծնողների միայն 27%-ն է նշել, որոշումների կայացման գործընթացում երեխաներն ակտիվ են (**Գծապատկեր 44**):

Գծապատկեր 44 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր երեխայի մասնակցությունը դպրոցում որոշումների կայացմանը: ԾՆՈՂՆԵՐ (%)



Ծնողների կարծիքով իրենց երեխաները դպրոցում որոշումների կայացմանը մասնակցում են դասղեկական ժամի և աշակերտական խորհուրդների միջոցով:

Գծապատկեր 45 - Ինչպե՞ս են դպրոցում երեխաներն առավել արդյունավետորեն մասնակցում որոշումների կայացմանը: ԾՆՈՂՆԵՐ (%)



Հետաքրքիր է, որ «ծնողները և ծանոթ բարեկամները», ինչպես նաև «առցանց հարթակները», որպես ոչ ֆորմալ կապի միջոցներ ծնողների կարծիքով ամենացածր արդյունավետությունն ունեն դպրոցում որոշումների կայացման համատեքստում:

Աշակերտական խորհրդատվական մարմնի դերը որոշումների կայացման գործընթացում

Հետազոտությանը մասնակցած աշակերտների 64%-ը, դասղեկների՝ 82.3%, տնօրենների՝ 92.7%-ը և ծնողների՝ 43.2%-ը կարևորել են աշակերտական խորհուրդների դերը որոշումների կայացման գործընթացում աշակերտների խթանման հարցում: Դպրոցում որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվ մասնակցության խթանման հարցում աշակերտական խորհուրդների դերն ամենաշատը կարևորել են Արմավիրի մարզի աշակերտները (72.6%), իսկ ամենաքիչը՝ Երևանի աշակերտները (58.5%):

Գծապատկեր 46 - Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվ մասնակցության խթանման հարցում աշակերտական խորհուրդների դերը (%)



Աշակերտների միայն 33.4%-ը, դասղեկների՝ 84.2%-ը և տնօրենների՝ 85.2%-ը են նշել, որ աշակերտները որոշումների կայացմանը մասնակցում է աշակերտական խորհուրդների միջոցով: Որոշումների կայացման գործընթացներում աշակերտների մասնակցության հետաքրքիր մարզային տարբերություններ կարելի է առանձնացնել: Մասնավորապես, **Գծապատկեր 47**-ից տեսնում ենք, որ աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացմանը մասնակցության միջոց ավելի շատ մատնանշել են Սյունիքի մարզում: Միևնույն ժամանակ, գծապատկերից տեսնում ենք, որ բոլոր թիրախային խմբերում աշակերտական խորհուրդները որպես արդյունավետ միջոց ամենացածր նշվածությունը Երևանում է: Երևանի աշակերտների ընդամենը 23.9%-ն է նշել աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացման արդյունավետ միջոց:

Գծապատկեր 47 - Հետազոտության մասնակիցների համամասնությունը, ովքեր նշել են որ աշակերտական խորհուրդները որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության արդյունավետ միջոց են, ըստ մարզերի և հետազոտության թիրախային խմբերի (%)



Հատկանշական է, որ գյուղական բնակավայրերում բոլոր թիրախային խմբերի կարծիքով աշակերտական խորհուրդները դիտվում են ավելի արդյունավետ միջոց, քան այլ քաղաքներում և Երևանում: Այս տարբերությունը հատկապես ցայտուն երևում է աշակերտների և նրանց ծնողների պատասխաններից: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ գյուղական բնակավայրում դպրոցը և աշակերտական խորհուրդը աշակերտների ինքնադրսևորման եթե ոչ միակ, ապա սակավաթիվ հարթակներից են, այդ իսկ պատճառով արդյունավետ միջոց են համարվում, իսկ Երևանում պատկերը բոլորովին այլ է:

Գծապատկեր 48 - Հետազոտության մասնակիցները, որոնց կարծիքով աշակերտական խորհուրդները որոշումների կայացման գործընթացում աշակերտների մասնակցության արդյունավետ միջոց են, ըստ բնակավայրի տիպի և հետազոտության թիրախային խմբերի (%)



ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի մասին տեղյակ են աշակերտների՝ ընդամենը 29.6%-ը, իսկ ամենատեղեկացվածը այս հարցում տնօրեններն են:

Գծապատկեր 49 - Արդյոք տեղյա՞կ եք ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդատվական մարմնի առկայության մասին: *(%)*



ԿԳՄՍ նախարարին կից խորհրդատվական մարմնի մասին տեղեկացված հետազոտության մասնակիցները գնահատել են նաև, թե որքանով է կարևոր այդ մարմնի դերը աշակերտների քաղաքացիական մասնակցությունը խթանելու հարցում (**Գծապատկեր 50**):

Գծապատկեր 50 - Գնահատեք նախարարին կից աշակերտական խորհրդատվական մարմնի կարևորությունը դպրոցականների քաղաքացիական մասնակցությունը խթանելու հարցում: *(%)*



ԿԳՄՍ նախարարին կից խորհրդատվական մարմնի մասին տեղեկացված աշակերտների միայն 56.1%-ն է տեղյակ, թե ինչպես է այն ձևավորվում:

Գծապատկեր 51 - Գիտե՞ք, թե ինչպես է այն ձևավորվում: (%)



ԿԳՄՍ նախարարին կից խորհրդատվական մարմնի մասին տեղեկացված աշակերտների միայն 20.6%-ն է դիմել այդ մարմնին անդամակցության նպատակով (**Գծապատկեր 52**):

Գծապատկեր 52 - Դուք/ Ձեր դպրոցի աշակերտներից դիմե՞լ եք/ են այդ խորհրդին անդամակցելու նպատակով: (%)



Խորհրդատվական մարմնի գործունեության մասին տեղեկացված դասղեկների 59.5% և տնօրենների 82.3%-ը նշել են, որ քաջալերել են աշակերտներին հայտ ներկայացնել խորհրդին անդամակցելու համար:

Մասնակիցների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին համայնքում և մասնակցության պրակտիկաները

Աշակերտների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Աշակերտների գնահատմամբ՝ տարիքի աճին զուգընթաց համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների ներգրավածության կարևորությունն աճում է: Այսպես, աշակերտների 79.2%-ը նշել է, որ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը համայնքին վերաբերող որոշումներին կարևոր է և միայն 34.6%-ն է այդպես գնահատել 15-19 տարեկան երիտասարդների մասնակցության կարևորությունը (**Գծապատկեր 53**):

Գծապատկեր 53 - Համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Հետազոտությանը մասնակցած աշակերտները գնահատել են, թե ինչ հաճախականությամբ են մասնակցել համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը հետևյալ տեսանկյուններից (**Գծապատկեր 54**):

Գծապատկեր 54 - Ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցում համայնքում եւ պետական մակարդակում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)



Ինչպես տեսնում ենք գծապատկերից՝ աշակերտներն առավել հաճախ համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը մասնակցում են «դպրոցական, ոչ կրթական միջոցառումներին» և «անհատական նախաձեռնության տեսքով»: Աշակերտների մասնակցությունը հանրահավաքներին, բողոքի ցույցերին, հանրային լսումներին, ՏԻՄ լսումներին, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների միջոցառումներին առավել հազվադեպ նշված մասնակցության ձևերն են: Հետաքրքրական է դիտարկել նաև, որ աշակերտների հիմնական մասը նշել է, որ երբեք չի մասնակցել հասարակական ակտիվ խմբերի ակցիաներին:

Դասղեկների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Դասղեկների դիտարկմամբ համայնքում որոշումների կայացման գործընթացում բոլոր տարիքային խմբերում որոշումների կայացմանը երիտասարդները պետք է ակտիվ ներգրավված լինեն (**Գծապատկեր 55** և **Գծապատկեր 28**): Դասղեկների 51.4%-ի կարծիքով 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունն անգամ կարևոր է համայնքում որոշումների կայացման գործընթացում:

Գծապատկեր 55 - Համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դասղեկների ընդամենը 12.1%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցությունը համայնքում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 56**):

Գծապատկեր 56 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր աշակերտների մասնակցությունը համայնքում որոշումների կայացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դասղեկների դիտարկմամբ՝ աշակերտները հիմնականում մասնակցում են համայնքի զարգացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով (**Գծապատկեր 57**):

Գծապատկեր 57 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցի աշակերտները մասնակցում համայնքի զարգացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դպրոցի տնօրենների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Տնօրենների 93.6%-ը կարևոր է համարում 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը համայնքում որոշումների կայացման գործընթացում (**Գծապատկեր 58Գծապատկեր 28**):

Գծապատկեր 58 - Համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Տնօրենների ընդամենը 14.4%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցության ակտիվությունը համայնքում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 59**):

Գծապատկեր 59 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր աշակերտների մասնակցությունը համայնքում որոշումների կայացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Ինչպես և դասղեկները, տնօրենները գտնում են, որ աշակերտները համայնքի զարգացմանը նախ և առաջ մասնակցում են դպրոցական նախաձեռնությունների միջոցով (**Գծապատկեր 60**):

Գծապատկեր 60 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցի աշակերտները մասնակցում համայնքի զարգացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Ծնողների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Ծնողների մեծամասնության կարծիքով՝ ուսումնական հաստատությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցությունը «կարևոր» կամ «խիստ կարևոր» է հատկապես 25-30 տարեկան երիտասարդների համար (**Գծապատկեր 61**):

Գծապատկեր 61 - Համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԾՆՈՂՆԵՐ (%)



Ծնողների ընդամենը 4.3%-ն է նշել, որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաներն ակտիվ մասնակցում են (**Գծապատկեր 62**): Միևնույն ժամանակ ծնողների 93.3%-ը նշել է, որ խրախուսում է իրենց երեխաներին մասնակցել դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը:

Գծապատկեր 62 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր երեխայի մասնակցությունը համայնքում որոշումների կայացմանը: ԾՆՈՂՆԵՐ (%)



Ըստ ծնողների աշակերտները հիմնականում մասնակցում են համայնքի զարգացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով (**Գծապատկեր 63**): Հետաքրքրական է

դիտարկել, որ ծնողների քիչ մասն է նշել, որ իրենց երեխան տեղական հասարակական կազմակերպությունների ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով է մասնակցում համայնքի զարգացմանը:

Գծապատկեր 63 - Ինչպե՞ս է Ձեր երեխան մասնակցում համայնքի զարգացմանը: ԾՆՈՂՆԵՐ (%)



Աշակերտների վերաբերմունքը ԵՆՈԿ-ին պետական քաղաքականության մեջ և մասնակցության պրակտիկաները

Աշակերտների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Աշակերտների 55%-ի կարծիքով՝ 20-24 տարեկան երիտասարդների մասնակցությունը պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացմանը կարևոր է, իսկ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցության կարևորությունը շատ ավելի բարձր է (**Գծապատկեր 64**):

Գծապատկեր 64 - Պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ *(%)*



Պետական մակարդակում որոշումների կայացմանը աշակերտները մասնակցել են հանրային լսումներին (աշակերտների՝ 24.2%), բողոքի ցույցերին (աշակերտների՝ 23.7%) և կուսակցությունների միջոցառումներին (19.6%) մասնակցության միջոցով:

Դասղեկների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Դասղեկների 30.8%-ի կարծիքով 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման մեջ խիստ կարևոր է (**Գծապատկեր 65Գծապատկեր 28**):

Գծապատկեր 65 - Պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դասղեկների ընդամենը 7.1%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 66**):

Գծապատկեր 66 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ *(%)*



Դասղեկների դիտարկմամբ՝ աշակերտները հիմնականում մասնակցում են պետական մակարդակում որոշումների կայացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով (**Գծապատկեր 67**):

Գծապատկեր 67 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցի աշակերտները մասնակցում պետական մակարդակում որոշումների կայացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ (%)



Դպրոցի տնօրենների գնահատականը պետական մակարդակում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Տնօրենների 48.3%-ի կարծիքով՝ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունը պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման մեջ խիստ կարևոր է (**Գծապատկեր 68Գծապատկեր 28**):

Գծապատկեր 68 - Պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Տնօրենների ընդամենը 4%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 69**):

Գծապատկեր 69 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ *(%)*



Տնօրենների դիտարկմամբ աշակերտները հիմնականում մասնակցում են պետական մակարդակում որոշումների կայացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով (**Գծապատկեր 70**):

Գծապատկեր 70 - Ինչպե՞ս են Ձեր դպրոցի աշակերտները մասնակցում պետական մակարդակում որոշումների կայացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)



Ծնողների գնահատականը համայնքում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ

Ծնողների 33.6%-ի կարծիքով՝ 25-30 տարեկան երիտասարդների մասնակցությունն պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման մեջ խիստ կարևոր է: Ծնողների միայն 4.5%-ն է նշել, որ պետական կարևորություն ունեցող որոշումներին երիտասարդների մասնակցությունը խիստ կարևոր է (**Գծապատկեր 71Գծապատկեր 28**):

Գծապատկեր 71 - Պետական կարևորություն ունեցող խնդիրներին առնչվող որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության կարևորությունը տարբեր տարիքային խմբերում, ԾՆՈՂՆԵՐ (%)



Ծնողների ընդամենը 3.2%-ն է բարձր գնահատել իրենց երեխաների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը (**Գծապատկեր 72**):

Գծապատկեր 72 - Ինչպե՞ս կգնահատեք Ձեր երեխայի մասնակցությունը պետական կարևորության խնդիրներին առնչվող որոշումներում: ԾՆՈՂՆԵՐ (%)



Հատկանշական է, որ համայնքային և պետական մակարդակում ծնողների ակտիվ մասնակցությունը որոշակիորեն պայմանավորում է երեխաների խրախուսումը մասնակցելու որոշումների կայացմանը համայնքային և պետական մակարդակներում: Այնուամենայնիվ այս կապը շատ թույլ է:

Ծնողների մասնակցությունը համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը հիմնականում նույնն է մնացել 2018թ.-ից առաջ և հետո (**Գծապատկեր 73**):

Գծապատկեր 73 - Ինքներդ մասնակցու՞մ եք համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը: Ի՞նչ հաճախականությամբ էիք մասնակցում մինչ 2018 թվականը և ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցում 2018-ից հետո: ԾՆՈՂՆԵՐ (*%, այո և երբեմն պատասխանների հանրագումարը)*



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, ծնողների մասնակցությունը 2018թ.-ից հետո միայն աճել է՝ սոցիալական մեդիահարթակներում ակտիվության տեսքով:

Աշակերտների մասնակցությանը խոչընդոտող գործոնները

Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ աշակերտների

Ըստ աշակերտների՝ տարբեր մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդներին հիմնականում խոչընդոտում են՝ «համապատասխան ոլորտային գիտելիքի պակասը», «մոտիվացիայի բացակայությունը», «իրազեկվածության պակասը» և «փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակը»: Ընդ որում իրազեկվածության պակասի մասին նշել են Երևանում բնակվող աշակերտների ընդամենը 25%-ը, Արմավիրում բնակվողների՝ 30.9%-ը, իսկ Սյունիքում բնակվողների՝ 33.9%-ը: Մասնակցությանը խոչընդոտող գործոնների ամբողջական պատկերը ներկայացված է ստորև:

Հատկանշական է, որ աշակերտների կողմից նշված գործոններն առավել բազմազան են, քան հետազոտությանը մասնակցած մյուս խմբերի նշած գործոնները: Ակնհայտ է, որ երիտասարդները շատ ավելի համապարփակ պատկերացում ունեն տարբեր հարթակներում որոշումների կայացման մեջ իրենց մասնակցությանը խոչընդոտող գործոնների մասին:

Աղյուսակ 2 - Ի՞նչն է խանգարում, որ ավելի շատ մասնակցեք ընտանիքում, դպրոցում, համայնքում և պետական մակարդակներում որոշումների կայացմանը: ԱՇԱԿԵՐՏՆԵՐ (%)

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Երիտասարդի համապատասխան ոլորտային գիտելիքի պակաս	**32.3**	**24.6**	**38.6**	**42.2**
Երիտասարդի մոտիվացիայի բացակայությունը	**19.5**	**36.6**	**34.3**	29.9
Երիտասարդի փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակ	16.0	15.5	19.8	19.5
Երիտասարդի իրազեկվածության պակասը	13.5	17.0	29.6	**32.4**
Երիտասարդի՝ սեփական ուժերի հանդեպ ինքնավստահության ցածր մակարդակ	14.8	12.7	13.8	9.4
Երիտասարդի կողմից անբավարար վստահությունը որոշում կայացնողների նկատմամբ	11.2	15.7	11.2	12.9
Երիտասարդների և մեծահասակների միջև փոխադարձ հարգանքի ոչ բավարար մակարդակը	11.4	11.4	7.5	8.4
Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար	9.9	9.2	9.4	8.5
Երիտասարդի սոցիալ-տնտեսական և ֆինանսական ոչ բարենպաստ պայմանները	9.5	5.6	5.8	6.5
Ներառական միջավայրի, մեծահասակների կողմից խրախուսման և աջակցության բացակայությունը	6.8	6.9	7.2	4.1
Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը	6.9	3.5	4.7	3.7

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը	4.9	5.8	5.9	4.8
Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը	4.0	4.9	3.3	4.1
էթնիկ պատկանելիության պատճառով	2.8	2.2	2.4	2.7
Հատուկ կարգավիճակի պատճառով հնարավորությունների անհասանելիությունը	2.0	2.3	2.6	2.7
Այլ	0.3	2.1	2.8	3.1

Դիտարկենք, որ ըստ աշակերների ներառական միջավայրի, մեծահասակների կողմից խրախուսման և աջակցության բացակայությունը որպես ընտանիքում, դպրոցում, համայնքում և պետական մակարդակներում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող գործոն բավականին քիչ է նշվել:

Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ դասղեկների

Դասղեկների կարծիքով՝ որոշումների կայացման գործընթացներում երիտասարդներին խոչընդոտում են ոլորտային գիտելիքի և իրազեկվածության պակասը, ինչպես նաև երիտասարդի մոտիվացիայի բացակայությունը:

Աղյուսակ 3 - Ո՞ր գործոններն են հատկապես խոչընդոտում աշակերտների ավելի մեծ ներգրավվածությանը դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը: ԴԱՍՂԵԿՆԵՐ (%)

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Երիտասարդի մոտիվացիայի բացակայությունը	**38.9**	35.6	35.6	30.3
Երիտասարդի իրազեկվածության պակասը	36.8	**45.3**	**45.3**	**43.5**
Երիտասարդի համապատասխան ոլորտային գիտելիքի պակաս	**45.7**	**39.5**	**39.5**	**47.8**
Երիտասարդի փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակ	32.0	23.9	23.9	24.3
Երիտասարդի՝ սեփական ուժերի հանդեպ ինքնավստահության ցածր մակարդակ	28.3	22.9	22.9	19.3
Երիտասարդների և մեծահասակների միջև փոխադարձ հարգանքի ոչ բավարար մակարդակը	9.4	12.5	12.5	10.2
Երիտասարդի կողմից անբավարար վստահությունը որոշում կայացնողների նկատմամբ	15.2	17.0	17.0	22.7
Ներառական միջավայրի, մեծահասակների կողմից խրախուսման և աջակցության բացակայությունը	5.4	9.8	9.8	6.9
Երիտասարդի սոցիալ-տնտեսական և ֆինանսական ոչ բարենպաստ պայմանները	14.6	12.3	12.3	13.5
էթնիկ պատկանելիության պատճառով	1.7	3.3	3.3	2.7

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը	5.8	3.5	3.5	3.9
Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը	2.1	3.7	3.7	3.7
Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը	6.7	7.7	7.7	8.5
Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը	4.8	4.8	4.8	4.6
Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար	16.6	18.3	18.3	21.2
Այլ	1.9	2.9	2.9	2.9

Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ դպրոցի տնօրենների

Տնօրենների կարծիքով՝ հանրային տարբեր մակարդակներում ՈԿԳ-ում երիտասարդների ներգրավվելուն խոչընդոտում է ոլորտային գիտելիքի պակասը:

Աղյուսակ 4 - Ո՞ր գործոններն են հատկապես խոչընդոտում աշակերտների ավելի մեծ ներգրավվածությանը դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը: ՏՆՕՐԵՆՆԵՐ (%)

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Երիտասարդի մոտիվացիայի բացակայությունը	9.6	28.7	27.8	24.8
Երիտասարդի իրազեկվածության պակասը	12.6	16.5	29.1	26.1
Երիտասարդի համապատասխան ոլորտային գիտելիքի պակաս	14.8	**37.8**	**35.2**	**39.1**
Երիտասարդի փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակ	10.0	27.8	25.7	29.6
Երիտասարդի՝ սեփական ուժերի հանդեպ ինքնավստահության ցածր մակարդակ	**14.8**	31.3	24.3	24.8
Երիտասարդների և մեծահասակների միջև փոխադարձ հարգանքի ոչ բավարար մակարդակը	7.8	4.8	5.7	5.2
Երիտասարդի կողմից անբավարար վստահությունը որոշում կայացնողների նկատմամբ	9.6	13.9	13.5	14.8
Ներառական միջավայրի, մեծահասակների կողմից խրախուսման և աջակցության բացակայությունը	4.3	3.0	2.6	3.5
Երիտասարդի սոցիալ-տնտեսական և ֆինանսական ոչ բարենպաստ պայմանները	10.0	11.7	12.2	8.7
Էթնիկ պատկանելիության պատճառով	1.3	2.6	2.6	3.0
Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը	1.7	7.0	7.0	6.1
Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը	0.9	0.9	0.9	0.9

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը	1.7	6.5	9.1	9.6
Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը	0.4	7.8	6.5	6.5
Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար	6.5	5.2	6.1	4.3
Այլ	0.9	2.2	2.2	2.2

Մասնակցությանը խոչընդոտող գործոններն՝ ըստ ծնողների

Ծնողների կարծիքով՝ որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվելուն խոչընդոտում են ոլորտային գիտելիքի և իրազեկվածության պակասը, ինչպես նաև մոտիվացիայի բացակայությունը:

Աղյուսակ 5 - Ո՞ր գործոններն են հատկապես խոչընդոտում աշակերտների ավելի մեծ ներգրավվածությանը դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը: ԾՆՈՂՆԵՐ (%)

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Երիտասարդի մոտիվացիայի բացակայությունը	28.5	**37.4**	35.3	28.6
Երիտասարդի իրազեկվածության պակասը	30.9	30.4	42.8	42.2
Երիտասարդի համապատասխան ոլորտային գիտելիքի պակաս	**36.1**	**39.4**	**42.0**	**47.0**
Երիտասարդի փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակ	18.5	20.8	19.8	23.3
Երիտասարդի՝ սեփական ուժերի հանդեպ ինքնավստահության ցածր մակարդակ	27.0	27.7	13.5	17.6
Երիտասարդների և մեծահասակների միջև փոխադարձ հարգանքի ոչ բավարար մակարդակը	23.2	13.8	11.9	9.0
Երիտասարդի կողմից անբավարար վստահությունը որոշում կայացնողների նկատմամբ	14.7	16.1	13.2	13.8
Ներառական միջավայրի, մեծահասակների կողմից խրախուսման և աջակցության բացակայությունը	9.0	9.1	7.7	6.0
Երիտասարդի սոցիալ-տնտեսական և ֆինանսական ոչ բարենպաստ պայմանները	13.8	7.5	8.4	8.6
էթնիկ պատկանելիության պատճառով	1.7	1.4	2.5	1.4
Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը	2.3	2.0	2.3	3.1
Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը	2.5	1.4	2.0	2.0
Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը	3.5	4.2	4.8	5.6

Խոչընդոտներ	Ընտանիքում	Դպրոցում	Համայնքում	Պետական մակարդակում
Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը	2.2	3.3	4.3	3.0
Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար, սրա մասին տեքստ	15.6	13.0	8.9	10.9
Այլ	3.7	3.3	3.3	2.4

Ակնհայտ է, որ բոլոր մակարդակներում երիտասարդների՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցության համար հետազոտության բոլոր մասնակիցների հիմնական մասը կարևորում է ոլորտային գիտելիքների առկայությունը, մոտիվացիայի և իրազեկվածության մակարդակը: Որպես խոչընդոտող գործոն առավել քիչ է նշվել հետևյալ հանգամանքները՝

- էթնիկ պատկանելիությունը,
- Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը,
- Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը,
- Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը,
- Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը,
- Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար:

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքներին վերաբերող եզրակացությունները ներկայացված են ԵԴԶ 4 տիրույթների հիման վրա.

1. **<u>Ներքին և արտաքին ռեսուրսներ (Assets)</u>**. *Երիտասարդներն ունեն անհրաժեշտ ռեսուրսներ, հմտություններ և կարողություններ՝ ցանկալի արդյունքներին հասնելու համար:*
2. **<u>Գործոնություն (Agency).</u>** *Երիտասարդները գիտակցում են և ունակ են օգտագործել իրենց կարողություններն ու ձգտումները իրենց կյանքին վերաբերող որոշումների վրա ազդեցություն ունենալու և համապատասխան գործողություններ իրականացնելու նպատակով:*
3. **<u>Ներդրում (Contribution).</u>** *Երիտասարդները սեփական կյանքին և իրենց համայնքին վերաբերող դրական զարգացումների կարևոր աղբյուր են հանդիսանում:*
4. **<u>Նպաստող միջավայր (Enabling environment)</u>**. *Երիտասարդները ապրում են մի միջավայրում, որը նպաստում է նրանց կարողությունների զարգացմանը, որտեղ նրանք հասանելիություն ունեն անհրաժեշտ ծառայություններին: Միևնույն ժամանակ այդ միջավայրն անվտանգ է և հնարավոր ռիսկերից խուսափելու կարողություն է փոխանցում:*

«Երիտասարդ» և «երիտասարդների ներգրավվածությունը որոշումների կայացմանը» հասկացությունների վերաբերյալ մասնակիցների ընկալումները

7. Երիտասարդների տարիքային շեմի վերաբերյալ աշակերտների ընկալումները համընկնում են «երիտասարդների» պաշտոնական սահմանման հետ (16-30 տարեկան), իսկ «մեծահասակների» ընկալմամբ երիտասարդության տարիքային միջակայքը 18-35 տարեկանն է: Դասղեկների, տնօրենների և անգամ ծնողների մեծամասնության ընկալմամբ, քանի դեռ երեխան դպրոցը չի ավարտել, նա չի կարող համարվել ինքնուրույն, որոշումների կայացմանը պատրաստ երիտասարդ:
8. Հետազոտության բոլոր թիրախային խմբերի մեծամասնության կարծիքով տարիքից բացի, «երիտասարդ» սահմանմանը համապատասխանելու համար «պետք է պատասխանատվություն կրել սեփական որոշումների հետևանքների համար» և «կարողանալ սեփական կյանքին վերաբերող ինքնուրույն որոշումներ կայացնել»:
9. Աշակերտների, ծնողների և դասղեկների գնահատմամբ որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության ամենացայտուն օրինակները վերաբերում են իրենց անմիջական շրջակա միջավայրին առնչվող խնդիրներին՝ սպորտային և ժամանցային միջոցառումների կազմակերպում, աղբահանություն, բնակարանի կահավորում և այլն, իսկ տնօրենների համար առաջին տեղում երիտասարդների մասնակցությունն է ՏԻՄ և համապետական ընտրություններին:
10. Աշակերտների, դասղեկների և տնօրենների կողմից նշված ամենահազվադեպ մասնակցության ձևը «մարզպետարաններին և համայնքապետարաններին կից երիտասարդական խորհուրդի նիստերին երիտասարդների մասնակցությունն է»:

11. Աշակերտների կարծիքով երիտասարդների ներգրավածությունը «կրթության և գիտության», «սպորտի» և «շրջակա միջավայրի պահպանության» ոլորտներում կարող է էապես բարելավել որոշումների կայացման գործընթացը:
12. Կրթության, գիտության և սպորտի ոլորտների հետ մեկտեղ, դասղեկները և տնօրենները նաև կարևորում են երիտասարդների մասնակցությունը մշակույթի, պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

Ներքին և արտաքին ռեսուրսներ

1. Աշակերտների մեծ մասը կարծում է, որ իրենց մոտ «ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Միևնույն ժամանակ, տեղեկացվածությունը դպրոցի կառավարման գործընթացներից և աշակերտների մասնակցության հնարավոր մեխանիզմներից բավականին ցածր է:
2. Աշակերտների կեսից ավելին (58.7%)-ը նշել է, որ ունեն «լավ» կամ «գերազանց» վերլուծական կարողություններ որոշումների կայացմանը մասնակցելու համար: Նրանց վերլուծական կարողությունների մասին նմանատիպ լավ կարծիք ունեն նաև դասղեկները (58.2%) և տնօրենները (62.4%):

Գործունություն

1. Աշակերտների կարծիքով մեր հասարակության մեջ որոշումների կայացման գործընթացում երիտասարդները բավականին պասիվ դերակատարում ունեն: Աշակերտների ընդամենը 21.2%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ: Գրեթե նույնակարծիք են նաև ծնողները (29.5%-ն է այդպես նշել):
2. Երիտասարդներին համեմատաբար ավելի մեծ դերակատարում են վերագրում դասղեկները և տնօրենները. դասղեկների 40.8%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ, իսկ տնօրենների՝ 49.8%-ը: Դասղեկների և տնօրենների այս մոտեցումը կարելի է վերագրել «սոցիալական ցանկալիության կողմնակալ ընկալման» միտմանը, երբ մեծահասակները երիտասարդներին վերագրում են այն, ինչ իրենք կցանկանային տեսնել:
3. Աշակերտների 71.6%-ի կարծիքով երիտասարդները մասնակցում են որոշումների կայացմանը նախ և առաջ գիտելիքներ, հմտություններ և սոցիալական կապեր ձեռք բերելու համար: 55.4%-ի կարծիքով նպատակն է բարելավել իրենց շրջապատող միջավայրը և համայնքը:
4. Ծնողների մեծամասնությունը՝ 90.5-ը նշել է, որ իրենց երեխան ներկայումս մասնակցում է իրենց ընտանիքում որոշումների կայացմանը: Ծնողների կարծիքով իրենց երեխաները կարող են իրական ազդեցություն ունենալ մասնագիտության ընտրությանը և ուսմանը վերաբերող հարցերում:
5. Աշակերտների կարծիքով դպրոցում իրենք կարող են համեմատաբար ավելի մեծ ազդեցություն ունենալ ուսումնական առարկայի ընտրությանը և դասղեկական ժամին վերաբերող որոշումներում:
6. Որոշումների կայացման գործընթացում իրենց աշակերտներին առավել մեծ «ակտիվություն» են վերագրում այն դասղեկները, որոնք կարևորում են 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանն

ընդհանրապես: Այլ կերպ ասած այստեղ առկա է ցանկության վերագրման միտում, որը դատելով աշակերտների մասնակցության «ինքնագնահատականից», այնքան էլ այդպես չէ:

7. Դասղեկների գնահատմամբ իրենց դպրոցի աշակերտների 65.7%-ի մոտ «Ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը» լավ կամ գերազանց վիճակում է: Դասղեկները բավական բարձր են գնահատել նաև աշակերտների մոտ «ապագայի նկատմամբ հավատը» և «վերլուծական մտածողությունը»:

Ներդրում

1. Աշակերտների 88.5%-ը նշել է, որ մասնակցում է ընտանիքում որոշումների կայացմանը: Աշակերտների կարծիքով իրենք ամենաշատը ազդեցություն ունեն իրենց մասնագիտությանը և ուսմանը վերաբերող որոշումներում: Հետաքրքրական է, որ առողջության պահպանման վերաբերյալ, կենցաղային աշխատանքների կազմակերպման և ընտանիքի բնակութան վայրի վերաբերյալ որոշումների վրա ըստ աշակերտները ավելի քիչ ազդեցություն ունեն իրենք:
2. Աշակերտների 50.6%-ը «նորմալ» է գնահատում դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցությունը, իսկ 26.5%-ը՝ «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատում:
3. Հետաքրքական է, որ աշակերտները և ծնողները դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների մասնակցությունը առցանց հարթակների միջոցով քիչ արդյունավետ են համարում:
4. Աղջիկներն ավելի բարձր են գնահատել դպրոցում որոշումների կայացման մեջ իրենց մասնակցությունը (30%-ը նշել է ակտիվ, կամ շատ ակտիվ), քան տղաները (21%-ն է նշել ակտիվ, կամ շատ ակտիվ):
5. Սյունիքի և Արմավիրի մարզի աշակերտները հավասարապես (աշակերտների 29.7% յուրաքանչյուր մարզում) ավելի բարձր են գնահատել իրենց ակտիվությունը, քան Երևանի աշակերտները (23.5%):
6. Ի տարբերություն աշակերտների, որոնց 22.9%-ը որոշումների կայացմանն իրենց մասնակցությունը ցածր է գնահատել, դասղեկների ընդամենը 7.3%-ն է այդպես կարծում: Միևնույն ժամանակ, դասղեկների 44.1% աշակերտների մասնակցությունը «ակտիվ» կամ «շատ ակտիվ» է գնահատել:
7. Հետաքրքիր է, որ ի տարբերություն Սյունիքի մարզի աշակերտների, ովքեր իրենց ակտիվությունը բարձր էին գնահատել Երևանի համեմատ, Սյունիքի մարզի դասղեկները համեմատաբար ցածր գնահատական են տվել:
8. Դասղեկների և տնօրենների կարծիքով՝ իրենց դպրոցի աշակերտները կարող են առաջին հերթին իրական ազդեցություն ունենալ արտաուսումնական միջոցառումների վերաբերող և դասղեկական ժամին վերաբերող որոշումների վրա:
9. Որոշումների կայացման գործընթացում աշակերտների ակտիվության ամենաբարձր գնահատականը (աշակերտների և դասղեկների համեմատ) տվել են տնօրենները: Տնօրենների 59.5%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակերտներ ակտիվ կամ շատ ակտիվ են որոշումների կայացման գործընթացում:
10. Համայնքային և պետական մակարդակներում տնօրենների կարծիքով առավել ակտիվ են Արմավիրի մարզի աշակերտները, իսկ դպրոցում՝ Երևանի աշակերտները:

11. Ծնողները որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաների մասնակցության վերաբերյալ գրեթե նույնական պատասխան են տվել, ինչ որ երեխաները: Ծնողների միայն 27%-ն է նշել, որոշումների կայացման գործընթացում երեխաներն ակտիվ են:
12. Դասղեկների ընդամենը 14.4%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցության ակտիվությունը համայնքում որոշումների կայացմանը:
13. Ծնողների ընդամենը 4.3%-ն է նշել, համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացում իրենց երեխաներն ակտիվ մասնակցում են: Միևնույն ժամանակ ծնողների 93.3%-ը նշել է, որ խրախուսում է իրենց երեխաներին մասնակցել դպրոցում, համայնքում և պետական մակարդակում որոշումների կայացմանը մասնակցելը:
14. Պետական մակարդակում որոշումների կայացմանը աշակերտները մասնակցել են հանրային լսումներին (աշակերտների՝ 24.2%), բողոքի ցույցերին (աշակերտների՝ 23.7%) և կուսակցությունների միջոցառումներին (19.6%) մասնակցության միջոցով:
15. Դասղեկների ընդամենը 7.1%-ն է բարձր գնահատել իրենց աշակերտների մասնակցությունը պետական մակարդակում որոշումների կայացմանը: Աշակերտները հիմնականում մասնակցում են պետական մակարդակում որոշումների կայացմանը դպրոցական նախաձեռնությունների միջոցով:

Նպաստող միջավայր

1. Աշակերտների 50.9%-ը որոշումների կայացմանը մասնակցում է դասղեկական ժամի միջոցով: Երկրորդ տեղում մասնակցությունն է աշակերտական խորհուրդների և հարցումների միջոցով:
2. Աշակերտների գնահատմամբ՝ դպրոցում որոշումների կայացման գործընթացում իրենց մասնակցության խթանման մեջ ամենամեծ կարևորությունն ունեն դասղեկը, ծնողները և դպրոցի ղեկավար անձնակազմը: Ինչպես տեսնում ենք, աշակերտները առավելապես մեծ դերակատարում են տվել անհատներին: Ի տարբերություն անհատների, ոչ ֆորմալ խմբերին, ինստիտուցիոնալ դերակատարներին աշակերտները ավելի քիչ կարևորություն են տվել:
3. Ի տարբերություն աշակերտների, որոնք աշակերտական խորհուրդներին շատ ավելի «համեստ» դերակատարում են տվել, դասղեկների 84.2%-ը և տնօրենների 85.2%-ը նշել են, որ իրենց դպրոցի աշակետները, որոշումների կայացմանը մասնակցում են աշակերտական խորհուրդների միջոցով:
4. Հետազոտությանը մասնակցած աշակերտների 64%-ը, դասղեկների՝ 82.3%, տնօրենների՝ 92.7%-ը և ծնողների՝ 43.2%-ը կարևորել են աշակերտական խորհուրդների դերը որոշումների կայացման գործընթացում աշակերտների խթանման հարցում:
5. Դպրոցում որոշումների կայացման գործընթնացում աշակերտների ակտիվ մասնակցության խթանման հարցում աշակերտական խորհուրդների դերն ամենաշատը կարևորել են Արմավիրի մարզի աշակերտները (72.6%), իսկ ամենաքիչը՝ Երևանի աշակերտները (58.5%):
6. Աշակերտների միայն 33.4%-ը, դասղեկների՝ 84.2%-ը և տնօրենների՝ 85.2%-ը են նշել, որ աշակերտները որոշումների կայացմանը մասնակցում է աշակերտական խորհուրդների միջոցով:

7. Աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացմանը մասնակցության միջոց ավելի շատ մատնանշել են Սյունիքի մարզում: Բոլոր թիրախային խմբերում աշակերտական խորհուրդները որպես արդյունավետ միջոց ամենացածր նշվածությունը Երևանում է: Երևանի աշակերտների ընդամենը 23.9%-ն է նշել աշակերտական խորհուրդները որպես որոշումների կայացման արդյունավետ միջոց:
8. Գյուղական բնակավայրերում բոլոր թիրախային խմբերի կարծիքով աշակերտական խորհուրդները դիտվում են ավելի արդյունավետ միջոց, քան այլ քաղաքներում և Երևանում:
9. ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի մասին տեղյակ են աշակերտների՝ ընդամենը 29.6%-ը, իսկ ամենատեղեկացվածը այս հարցում տնօրեններն են: ԿԳՄՍ-ն նախարարին կից խորհրդատվական մարմնի մասին տեղեկացված աշակերտների միայն 56.1%-ն է տեղյակ, թե ինչպես է այն ձևավորվում:
10. Ըստ աշակերտների՝ տարբեր մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդներին հիմնականում խոչընդոտում են՝ «համապատասխան ոլորտային գիտելիքի պակասը», «մոտիվացիայի բացակայությունը», «իրազեկվածության պակասը» և «փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակը»:
11. Որպես խոչընդոտող գործոն՝ «իրազեկվածության պակասի մասին» նշել են Երևանում բնակվող աշակերտների ընդամենը 25%-ը, Արմավիրում բնակվողների՝ 30.9%-ը, իսկ Սյունիքում բնակվողների՝ 33.9%-ը:
12. Բոլոր մակարդակներում երիտասարդների՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցության համար հետազոտության բոլոր մասնակիցների հիմնական մասը կարևորում է ոլորտային գիտելիքների առկայությունը, մոտիվացիայի և իրազեկվածության մակարդակը: Որպես խոչընդոտող գործոն առավել քիչ է նշվել հետևյալ հանգամանքները՝
    - Էթնիկ պատկանելիությունը.
    - Հատուկ կարգավիճակի պատճառով (օրինակ՝ հաշմանդամություն, և այլն) հնարավորությունների անհասանելիությունը.
    - Երիտասարդի սեռով պայմանավորված հնարավորությունների անհասանելիությունը.
    - Մասնակցային ֆիզիկական հարթակների բացակայությունը.
    - Առցանց մասնակցային հարթակների անհասանելիությունը.
    - Երիտասարդի համար ապահով միջավայրի բացակայությունը՝ իր սեփական տեսակետներն արտահայտելու համար:

Հավելվածներ

Հավելված 1. Դպրոցների տնօրենների շրջանում առցանց հարցման հարցաթերթ
Հավելված 2. Բարձր դասարանների աշակերտների շրջանում առցանց հարցման հարցաթերթ
Հավելված 3. Դասղեկների շրջանում առցանց հարցման հարցաթերթ
Հավելված 4. Ծնողների շրջանում առցանց հարցման հարցաթերթ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ: